№ 27 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 6

1907

ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 6 № 27

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի. առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊԵԿՈՎ

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Ծանուցութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և ազգ օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՆԵՐԿԱՅ 1907 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(35-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ռ., տասն ամսվանը՝ 9 ռ., ինն ամսվանը՝ 8 ռ., 8 ամսվանը՝ 7 ռ., եօթ և վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., մէկ ամսվանը 1 ռուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ. (Բազմանայա և Բարօնեկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ կարելի է վճարել ՄԱՍ-ՄԱՍ։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Բացած է բաժանորդագրութիւն և մինչև փետրվարի 12—14 լոյս կը տեսնի

„ՅՈՒՂԱՐԱՐ“

Թատերական-գրական-գեղարուեստական

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՐԸ

որ արդէն մամուլի տակ է։ Թերթիս աշխատակցելու են տ. Միքանոյշ, պ.պ. Ահարոնեան Աւ., Բաբայեան Լևոն, Բաշինջաղեան Գ., Երիցեան Գարեգին, Թումանեանց Յովհ., Թորամանեան Թորոս (Հարտարապետ), Լէօ, Memento Mori, Շանթ, Փափազեան Վրթ., Քափանակեան Ստ., Տէր-Աստուածատրեան Գ., Նար-Դոս, Վրոյր և ուրիշներ։ Թերթի նպատակն է ծանօթացնել և տարածել գեղարուեստի գաղափարը հասարակութեան զանազան խաւերում, օժանդակել նրա ճշտիւ ըմբռնմանը և ամէն կերպ նպաստել գաւառական բնժերի զարգացման։ Այս տարի տալու է 18 համար 100-ից աւելի պատկերներով և 9 հատ ընտիր պլեսներ, որոնց առանց գծուարութեան ամէն տեղ կարելի է ներկայացնել։ Տարեկան բաժնեգինն է 5 ռ., արտասահման 6 ռ. կամ 3 ոսկու։ Թիֆլիսում բաժանորդ գրվել կարելի է 1) «Գուտենբերգ» գրավաճառանոցում, 2) «Փարոս» քեօսկում, 3) խմբագրատանը, Սերգիևսկայա № 3, ուր դիմելու են օտարաքաղաքացիք։

Խմբագիր-հրատարակիչ՝ օր. Մարիամ Մեհրաբեան

տա. 3—5

1907 թ.

„ՆՈՐ-ԱՇԽԱՏԱՆՔ“

ժողովրդական-հասարակական-տնտեսական

շաբաթաթերթ

«Նոր-Աշխատանքը» նուիրած է լինելու հայ աշխատաւոր գիւղացիութեան և գիւղական պրոլետարիատի տնտեսական-իրաւական շահերի պաշտպանութեանը։

«Նոր-Աշխատանքը» առաջնակարգ տեղ է տալու մեր գաւառի կեանքի ուսումնասիրութեանը։

«Նոր-Աշխատանք»-ում աշխատակցելու են նրա ծրագրին ու ուղղութեանը համակրող հայ մտաւորականներ։

«Նոր-Աշխատանքը» իր տարեկան բաժանորդներին տալու է ձրի չորս-դիրք նուիրված գիւղատնտեսութեանը և ժամանակակից կեանքի իրաւական հարցերին։

ԲԱԺՆԵԳԻՆԸ

Ռուսաստանում		Արտասահմանում	
Տարին.	4 ռ	Տարին.	18 ֆր.
Կէս տարին. . . .	2 ռ. 50 կ.	Կէս տարին. . . .	10 ֆր.

Հասցէն՝ Тифлисъ, редакцію журнала «Норъ-Ашхатанкъ», Бебутовская № 50.

2—3 տ. Խմբագիր-հրատարակիչ՝ Վիրգինէ Աթանասեան

ՄԱՍՆԱԳԷՏ ԶԻՆԻՈՐԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԵՐԹԵՒԵԿ ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մեծ-Վանքի փողոց, № 5, ոչ հեռու Ալէքսանդրեան այգուց.

Վճարն է խորհրդի համար 50 կոպ.

Հեռախօս № 481.

Ընդունելութիւնը առ. ժ. 11—5 ժ. եր.

Բժ. Տ. Ի. ՐՈՒԲԻՆՈՎ.—Ներքին հիւ. հինգ., կիր. 3—4 ժամ.

Բժ. Ֆ. Վ. ԶՈՒՐԻՆՈՎԱԿԻ.—Վիրաբուժ. հիւ. երկ., ուրբ. 2—3 ժ.

Բժ. Մ. Ի. ԵԱՆԶԷԼՎԱԿԻ.—Ականջի, քթի և բերանի, չորեքշաբ., ուրբ. 2—3 ժ., երեքշ., կիր. 3—4 ժ.։

Բժ. Վ. Վ. ՎՆՈՒԿՈՎ.—Վիրաբուժ., մտրասեռ. երկ., հինգ., շաբ. և կիր. 2—3 ժ.

Բժ. Ն. Մ. ԱՍՊԻՏՈՎ.—Քթի, բերանի և ականջի, երկ. երեք. և շաբ. 1—2 ժ., հինգ., կիր., 12—1 ժ.

Բժ. Վ. Գ. ԲՕԺՈՎԱԿԻ.—Ներքին հիվանդաց ամէն օր 4—5 ժ.

Բժ. Ա. Ն. ՏԵՏՐԱՇԷՆ.—Կաղուն, վներ. ամէն օր 1—2 ժ.

Բժ. Ա. Տ. ԲՕՁՄԱՒԻՏԿԻ.—Երեխ., երկ., չորեք 4—5 ժ., երեք. շաբ. 3—4 ժ.։

Բժ. Ն. Ի. ՆԷՈՒԻՑՄԻՆ.—Աչքի, երկ., ուրբ., 12—1 ժ.

Բժ. Ա. Ա. ՆՈՎԻՑԿԻ.—Կանանց, երեխ., երեքշ. երեք., ուրբ., շաբ., կիր. 2—3 ժ.։

Բժ. Զ. Ֆ. ՆԵԶՈՐՈՎ.—Ատամի հիւ. 11—5 ժ. ամէն օր.

Բժ. Կ. Մ. ԳԻՎԱՐԳԿԻ
Բժ. Կ. Ի. ԶՈՒՐԻՆՈՎԱԿԻ } Կլինիքական անալիզ

Բժ. Գ. Ի. ՕՆՕՇԿՈ.—Բժշկ. գիմն. մասաժ, երեքաբ. 4—6 ժամ.

Մ. Ե. ԳՈՐՈԳՑԵՎԱ.—Մասաժ. 11—4. ժ.

Մ. ԵԱ. ՊԱՒԼՈՑԿԻ.—Վիրաբ. 12—1 ժ. ամէն օր, կիրակի օրը 4—5 ժ.

Բժ. Կ. Գ, ԳՕՐԱԼԵՎԻՉ.—Ներքին հիւանդ. ամէն օր 12—1 ժամը։

Բժ. Ա. Ա. ՄՕՆՍԷ.—Երեխ., երեքշ. հինգ. շաբ. 4—5 ժամը։

Բժշկական խորհուրդներ, մասաժ, սրսկել, անդամահատել, անալիզի ենթարկել, հիպնոզել, ատամների և ծառաների քննելը—բոլոր համաձայնութեան։

տա. (ա. օ.) 60—144

ԿԱՆԱՆՑ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Անաստասէվսկայա փողոց, տուն № 18, հեռախօս 969։

Հիւանդ կանանց ընդունելութիւնը ամէն ժամանակ նախորդ յայտարարութեան համաձայն։

Երթևեկ հիւանդների ընդունելութիւնը ամէնայն օր ցերեկվայ ժամը 11—12, հատեալ բժիշկների ձեռքով.

Ա. Բ. Ֆիշեր.—երեքշաբթի, շաբաթ։

Ա. Գ. Բարսուկով.—չորեքշաբթի։

Ս. Պ. Շահ-Պարոնեան.—կիրակի, հինգշաբթի։

Ա. Ա. Նովիցկի.—երկուշ. ուրբաթ։

Երեխաների հիւանդութիւնների համար Ն. Զ. Ումիկովը հիւանդ երեխաներին ընդունում է երկուշաբթի և հինգշաբթի օրերը, 2—3 ժ.։

Հիւանդանոցին կից կատարվում են քիմիկո-միկրոսկոպական հետազօտութիւններ՝ մէզի, խորխի և այլն։

Ծծմայրերի քննութիւն, ծաղկի պատուաստումն և այլն։

(հ. շ. ե.) 3—50

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Մշտական մահճակալներով

Ելիզավետինսկայա փողոց № 79, տելեֆօն 1026.

Հիւանդների ընդունելութիւնը ամեն օր

ՄԻՔԱՅԵԼ ԱՂԱՋԱՆԵԱՆ.—11—12 ժ.—միզասեռական, կաղուն և սիֆիլիս։

Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ.—11—12 ժ.—Ղեղային, ներքին հ. և էլեքտրօբուժութիւն։

Գ. Հ. ԹԱԴԷՈՍԵԱՆ.—12—1 ժ. ներքին և երեխայոց հ։

Ի. Ե. ԱԻԵՏԻՍԵԱՆՑ.—12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։

Ս. Ա. ԼԻԻՐԻ.—12—1 ժ. քթի, կոկորդի և ականջի հ։

Մ. Գ. ԿԻՄՕՆՑ.—1—2 ժ. վիրաբուժական հ.։

Գ. Ա. ԲԷՅԵՐ.—1—2 ժ. երեխայոց և ներքին հ.։

Ի. Ն. ԹՈՒՄԱՆՕՎ.—5—6 ժ. (երեկոյան)-կանանց հ. և մանկաբարձութիւն։

Հիւանդանոցում բժշկումն հիպնոզով, կատարվում են միկրոսկոպական, քիմիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկաստուերներ և ծծմայրների ընտրողութիւն։

Բժշկական խորհուրդի համար վճարը 50 կոպ. Օպերացիաների և համախորհուրդների վճարը ըստ համաձայնութեան։ Գիշերօթիկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին նոմերներից։

առ. ե. հ. կ. 21—100

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

„ՍԱՓՐԻԶ“

հումոր, սատիրիկ-սիմվոլիք

ամսաթերթի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Լոյս տեսաւ

VI-րդ համարը,

որը և ուղարկվեց բաժանորդներին նաև

„ԱՆԻ“

հրատարակչ. ընկեր. բաց նամակների I սերիան, 8 հատ, գինն է 60 կոպ.։

Բաժանորդներին ուղարկվեց ձրի երբի «Սապրիչի» 1 պրէմիան։

Տարեկան բաժանորդագրին է պրէմիայով 2 ռուբլի, իսկ Անդրկասպեան երկրի և արտասահմանի համար 2 ռուբլի 50 կոպ.։

Հասցէ՝ С. П. Б. Казанская 46 18.

«ՍԱՓՐԻԶ»-ի խմբագրութիւն

ե. շ. տա. 4—25

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի խոշոր վրիպակ. Դոնէ այժմ. Վերջին տեղեկութիւններ. Ընտրութիւնները Կովկասում. Պետական Դումայի ընտրութիւնների շուրջը. Ընտրութիւնները Թուրքեստանում. Դատաստանական դահլիճից. Հայ բանւորները և գործադուլները. Ժօրէսի կոչը ռուսաց օպպոզիցիային. Տեղեկութիւններ գաւառից. Դոնէ բարն մի պահանջիր. Նամակ Կրասնօվոդսկից. Բաց նամակ Ռսորվ զարգապետին. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր.—Արտաքին լուրեր. Ամերիկայի միացեալ նահանգները. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՄԻ ԽՈՇՈՐ ՎՐԻՊԱԿ

«Մշակի» նախորդ № 26-ի երրորդ երեսի վրա «Թանշանների իսկական իմաստը» յօդուածի և «Հասարակութեան դատաստանին» Վերին-Ագուլիսից գրված նամակի վերջին մասերն ապաւաղված են։ Երեսի 4-րդ սիւնակի 46-որդ տողից յետոյ մտել է «Հասարակութեան դատաստանին» նամակի վերջին մասը։ Եւ փոխադարձաբար՝ «Թանշանների իսկական իմաստը» յօդուածի վերջին մասը սխալմամբ մտել է «Հասարակութեան դատաստանին» նամակի 82-որդ տողից յետոյ։ Յօդուածը պատկանում է Ա.-Ազատին, իսկ նամակը՝ Մեսրոպ վ. Մաքսուտեանցին։

ԳՈՆԷ ԱՅԺՄ

I

Սկսում են օրերը տաքանալ։
Մօտենում է գարունը։
Իսկ տաքացող օրերի և գարնան հետ կապված են մեր ազէտաւոր տեղերի ոչ թէ ուրախութիւնները, այլ սոսկալի հոգեկան տանջանքները։

Նախկին տարիներում, երբ ներկայ ազէտալը բարւոք վիճակի մէջ էր, գարունը նրան էլ ուրախութիւններ էր բերում, որովհետև նա իր ձեռքին միջոցներ ունէր իր արտերը հերկելու, և ցանքերը անելու։

Իսկ այժմ։

Այժմ նա դատարկ ձեռքով նստած է և չը գիտէ թէ ինչ անէ։ Նա ոչ ուտելու հաց ունի, ոչ սերմացու։

Ինչպէս չը տանջվի, ինչպէս հոգեմաշ չը լինի խեղճ շինականը։

Հասարակութիւնը, ճիշտ է, փոքր ինչ օգնեց նրան և տուեց ուտելու մի փոքր հաց, բայց կարիքը բազմապատիկ աւելի է, քան հասցրած օգնութիւնը։

Իսկ սերմացուի համար ոչինչ չէ արված։

Ազէտեալ գիւղացին եթէ կարողանար սերմացու ճարել, նա կը սկսէր վերականգնել իր քայքայված տնտեսութիւնը, որը անուշադիր շատ տարիներ պէտք է զգայ աղէտի արհաւիրքների ծանրութիւնը։

Քայքայված տնտեսութիւնը շուտ չէ վերականգնում։

Այն, տարիներ են պէտք, որպէս զի աղէտի հետքերը ջնջվեն մեր իրականութիւնից։

II

Եթէ աշնան ամիսներում, մեր թոյլ գործունէութեան շնորհիւ, անկարող եղանք օգնել աղէտեալներին, տալով նրանց ձեռքը սերմացու, աշնանացանի համար, դնում է այժմ տանք այդ սերմացուն, որպէս զի դնում է գարնան առատ ցանքսով կարելի լինի աշնան պակասորդը լրացնելու։

Աղէտեալին օգնելը նշանակում է օգնել ոչ միայն նրան, այլ և մեզ բոլորիս։ Նրա թշուառութիւնը կաշկանդել է մեզ այս տարի մեր բոլոր գործառութիւնների մէջ։ Նա հետեւեալ տարիները աւելի ևս մեծ չափով կը կաշկանդէ մեզ, եթէ միջոցներ չենք ձեռք առնի կազդուրել թշուառացած մարդուն և տաքի դնել նրան։

Հարիւր հազարներ և նոյն իսկ միլիոններ, որոնք այս երկու տարին դուրս են խլվում հասարակութեան գրպաններից, իբրև նպաստներ և օժանդակութիւններ, սպառում են այն միջոցները, որոնք կարող էին գործադրվել կուլտուրական զանազան նպատակների համար, բայց ինչ արած. աղէտը կործանել է ամբողջ շրջաններ և մենք պարտաւոր ենք կազդուրել և վերականգնել նրանց, որով մենք վերականգնում ենք և ժողովրդական հարստութեան աղբիւրները։

III

Մեր աղէտեալները պատմական անցողական շրջանի անմեղ զոհերն են։

Նրանց տեղ կարող էր լինել ձեզնից իւրաքանչիւրը։ Իսկ եթէ դուք բաղդի բերմամբ ազատվել էք ազէտի որոտներից, կամ ջնջվել էք փոքր չափով, պէտք է ձեր անմիջական հոգսը շինէք ազէտեալի վիճակը։ Պատմական քմահաճույքի հարուածը նրան է հասել, այսօրվայ ազէտեալին, բայց նա չէ մեղաւորը, նա չէ սարափներ ծնողը. նա անմեղ նահատակ է։

Պատմական բօպէի զոհերին օգնելով մենք մեր բաղդի մէջ ենք առնում պատմական անուն շարժումը։ Զրնկեվելով պատմական շրջանի հարուածներից, մենք տէր ենք դառնում նոր կեանքի։ Իսկ որպէսզի այդ այդպէս լինի, պէտք է աշխատենք, որ ոչ ոք գլուխ չը կորցնի, չը յուսահատվի և ազգաբնակութիւնը իր ամբողջութեամբ ազատութիւն գտնելով իր շրջապատողներից, դարձի լրջի ընկնի ոտքի կանգնելու և աւելի ևս մեծ եռանդով ու հոգեկան այժմով շարունակել իր կուլտուրական կեանքը։

Օգնութիւնը ոչ միայն պարտաւորութիւն է, այլ և անհրաժեշտութիւն։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Բագու, 4 փետրվարի.—Մահացու վիրաւորվեց և գիշերս վախճանվեց նաւահանգստի կառավարիչ Միխայլովը։ Մարդասպանները ազատ են։ Հանգուցեալը ստանում էր բազմաթիւ սպառնական նամակներ։ («Հ. Դ.»)

—

Բագու, 2 փետրվարի.—Կովկասեան և Բագուի ընկերութիւնների պրօմիսլներում աշխատանքները վերսկսեցին։ Բանւորներին խոստացված է տալ նուէրները՝ ռոճիկների 20 տոկոսի չափով։ Գործադուլային շարժումը կամաց-կամաց թուլանում է։ Քաղաքապետը Բալախանիում երկրորդ անգամ խօսակցեց բանւորների հետ։ («Հ. Դ.»)

—

Թէհրան, 2 փետրվարի.—Ի լրումն սահմանադրութեան և շարիաթի, լոյս տեսաւ շահի ֆիրմանը, որը իսկապէս թէև մի բան չէ աւելացնում եղածի վրա, բայց և այնպէս ամենուրեք հանդիսացուցիչ ազդեցութիւն թողեց շնորհիւ այն հանգամանքի, որ նրանով երեւաց, որ կառավարութիւնը ճանաչում է գաւառական մէջլիսների գոյութիւնը և արձակված է համարում վերին ատեանի անժողովրդական մինիստր Նօսին։ Այժմ բանակցութիւններ են վարվում Պարսկաստանից հեռացնելու մըշտաբնակ բելգիացիներին։ Թաւրիզում տիրում է լիակատար հանդստութիւն։ Ուրմիայում քրդերը կողոպտում են շրջակայքի գիւղերը և ծեծում են բնակիչներին։ Աւազակային մի մեծ խումբ ներս է մտել քաղաք։ («Հ. Դ.»)

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

—

Կովկասի Փոխարքայի անօրէնութեան ներքոյդ դրած է 4385 ռուբլի, որ տրվելու է Պետական Դումայի անդամներին, Կովկասի փոխարքայութեան տեղերից Պետերբուրգ գնալու համար։

—

Թիֆլիսի նահանգից սոց.-դեմօկրատ. կուսակցութեան կողմից Պետական Դումայի անդամների թեկնածուներ են առաջարկվում Արշ. Զափարիձէն, ատամնաբոյժ Կեվեռ, Սեվ. Զուգելի և պ. Մատուլաշվիլին։

—

(Ռուսաց սոցիալ-դեմօկրատական բանւորական կուսակցութեան Թիֆլիսի կազմակերպութեան կօնֆերենցիայի 7 անդամների բողոքը)։

Փետրվարի 2-ին, Թիֆլիսի սոցիալ-դեմօկրատական կուսակցութեան քաղաքային կօնֆերենցիայի նիստում (ընդհանուր 56 թւից ձայների 29 մեծամասնութեամբ) որոշված է Պետական Դումայի անդամութեան համար թեկնածու ընտրել անդամութեան «փոքրամասնականներից» և մերժվել է առաջարկը՝ մատնանշել ամենարժանաւորին, ընտրելիս նկատելով այն հանգամանքը, թէ նա պատանում է այս կամ այն ֆրակցիային։

Ուշադրութեան առնելով, որ ընտրողական ամբողջ շրջանը Թիֆլիսում անցաւ միացեալ սոցիալ-դեմօկրատական կազմակերպութեան դրօշի տակ, ուշադրութեան առնելով ապա, որ ինչպէս Կովկասի ընդհանուր շրջանային կենտրոնի, այնպէս և Թիֆլիսի կազմակերպութեան այն ընկերների վարմունքը, որոնք ոչ միայն «փոքրամասնականներից», այլև «մեծամասնականներից» յայտարարված են իբրև Դումայի հաւանական թեկնածուներ, ինչպէս և հենց մեր կուսակցութեան միութեան փաստը, հնարաւորութիւն չէին տալիս այդօրինակ ֆրակցիոնական որոշում կայացնելու Պետական Դումայի թեկնածութեան հարցի նկատմամբ, — կօնֆերենցիայում ներկայ եղող մեծամասնականները այդպիսի վճիռը համարում են բռնութիւն և ծաղր —կազմակերպութեան փոքրամասնութիւն կազմող մասի իրաւունքների վերաբերութեամբ։ (Ներկայ դէպքում մեծամասնականների)։

Երկրորդ, այդ վճիռը նրանք պատրաստ են ընդունում, ինչպէս «մեծամասնականների» ֆրակցիայի, այնպէս և պատուիրակների ու Թիֆլիսի հանրային ազգաբնակութեան նկատմամբ, որը (ազգաբնակութիւնը) ձայն տալով սոցիալ-դեմօկրատ պատուիրակներին, կարծում էր, նա ձայն է տալիս ոչ թէ սոսկ «փոքրամասնականների» ֆրակցիային, այլ Թիֆլիսի միացեալ սոցիալ-դեմօկրատական կազմակերպութեան։

Ուշադրութեան առնելով, որ ընտրողական [illegible] ընտրելիս Պետական Դումայի համար մասնակցված թեկնածուն, այդպիսով, հանդիսանում է ոչ հանուր սոցիալ-դեմօկրատական կազմակերպութեան թեկնածու, այլ միայն «փոքրամասնականների» ֆրակցիայի թեկնածու։

Գանձակ.—Ռուս մարդկանց կողմից համաբաս միաձայն պատուիրակ են առաջարկվել Մ. Ա. Լաչչէնկօն, Ն. Դ. Անտոնօվը, Սարգսօվսկին, Կոցօվսկին, Վասիլիևսան, որոնք ստացել են 1—3-ական ձայն։ Ինչպէս երևում է, նշանակված կուսակցութիւնների ներկայացուցիչները ոչ մի հասկացողութիւն չունեն պատուիրակներին ձայն տալու մասին, իսկ իրանք անդամները—ձայն էին տալիս պատահական թեկնածուներին։ («Зак.»)

—

Գանձակի նահանգապետը հաղորդել է Կովկասի Փոխարքային, որ Գանձակի նահանգում 45 պատուիրակներից նահանգական ընտրողական կազմի մէջ մտնում են Պետական Դումայի 3 անդամներ ընտրելու համար 18 հոգի հայերի կողմից և 27 հոգի մահմեդականներից և միւս ազգութիւններից։ Այդ պատճառով Կովկասի Փոխարքան առաջարկել է Գանձակի նահանգապետին նահանգական ընտրողական ժողովը 2 մասի բաժանել, իրաւունք տալ 18 հայ պատուիրակներին ընտրել Պետական Դումայի 1 անդամ, իսկ Թուրքերի և միւս ազգերի 27 պատուիրակներին ընտրել Պետական Դումայի 2 անդամ։

—

Բագում, յունվարի 31-ին տեղի է ունեցել նահանգի պատուիրակների ընտրութիւնը (փոխարէն յունվարի 28-ին չը կայացածի)։ Ընտրվել են Գ. Կալինին, Ա. Բուգանով և Ներսէս Սարուխան բանւորները։ Բոլորն էլ սոցիալ դեմօկրատներ են։ Ընտրութեանը պայքար են մղել սոցիալ-դեմօկրատների դէմ սոցիալ-յեղափոխականների և դաշնակցականների բլոկը, սակայն վերջինների թեկնածուները ստացել են 43 ձայն, ընդդէմ սոց.-դեմօկրատների 81 ձայնի։

—

Պետրօվսկ.—Ընտրված է անցեալ տարվայ պատուիրակ Պ. Ի. Կօնչուխինէն—պրօգրեսիստ։

—

Էջմիածին.—Պատուիրակներ ընտրված են Սարգիս Վարդիկեանց, Կարապետ Ենգիբարեանց, Վիրաբ Տէր-Գրիգորեանց, Թորգոմ Սուքիասեանց, Յովհաննէս Բաշեանց և Պետրոս Մելիքեանց, բոլորն էլ դաշնակցականներ։

—

Դերբենդ.—Ընտրված են՝ Կասումբեգ Հէյդարով և Ամիրաբ-Ալի-Դուլիեվ։ Երկուսն էլ անկուսակցականներ են։

—

Կարեւագինի գաւ. (Զիբրայիլ), Գանձակի նահանգ։ Գիւղական համայնքի լիազօրների կողմից ընտրվել են՝ Տախմազ-Կուլի-օղլի, Ֆարհադ-Մուրադխանով և Սալման Խալիֆաբէգով բոլորն էլ Թուրքեր։

—

Նուխու գաւառ, Գանձակի նահ.։ Գիւղացիների կողմից պատուիրակ ընտրվեցին մէկ հայ՝ Միրզայան Դուլասեան և 3 Թուրքեր՝ Հաջի Էֆէնդի-Հաջի Ալի օղլի, Զաբաբ Բաա-օղլի և Հաջի Զիբրայիլ-Մահմէդ օղլի։

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

(Հեռագրով)

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 փետրվարի։ Քաղաքապետի առաջարկութեամբ Պետերբուրգի ընտրողական մասնաժողովը ընտրողական ցուցակներից հանեց սահմանադրական-ռամկավարների Պետերբուրգի թեկնածու Մակսիմ Կովալևսկու անունը։ Կովալևսկուն ընտրողական ցուցակը մտցրել էին պաշտօնի ցնդող սակայն երևաց, որ որոշակի ոճիկ չունեցող պրօֆէսօրների ցուցակի մէջ է գրված։ Պետերբուրգում նա ապրում է մէկ տարուց պակաս։

ՍԱՄԱՐԱ, 4 փետրվարի։ 80 պատուիրակներից անցան 45 հոկտեմբերականներ։

ՄԻՆՍԿ, 4 փետր., Ծայրագաւառի ռուս դաշնակցութեան կոմիտէը ստացել է 488 ստորագրութեամբ նահանգի գաւառների երեք եկեղեցու ծխականների հաւաքական գրութիւնը, որով նրանք միանում են այն միջնորդութեան, որ յարուցված է համամասական ներկայացուցչութիւն մտցնելու Պետական Դումայի և Խորհրդի համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 փետրվ.։ Մինչև փետրվարի 4-ը շրջանների, գիմնազիաների, մանր հողատէրերի, բանւորների, ստանիցիաների լիազօրների համագումարներին ընտրված 42,393 լիազօրներից 7113-ը միապետականներ են, չափաւորականներ, օրինակարգի կուսակցութեան պատկանողներ, հոկտ. 17-ի դաշնակիցներ, կենտրոնականներ և այլ սահմանադիր-միապետական կուսակցութիւններին պատկանողներ, որոնք կանգնած են խաղաղ վերանորոգման կուսակցութիւնից դէպի աջ։ 16,760 հոգի են, իսկ մնացած 18,514 լիազօրների, որոնց թւումն են ձախակողմեանները, անկուսակցական առաջադիմականները, սահմանադիր-ռամկավարներ ընդամենը 1560 հոգի են։ Մանր հողատէրերի կողմից ընտրված լիազօրներից 3828-ը քահանաներ են։

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԹՈՒՐՔԵՍՏԱՆՈՒՄ

—

Ընտրողական պայքարը մեր երկրում շատ առաջ սկսվեց քան ընդհանուր պատերազմի մէջ։ Եւ երևի նոյն կօնտրաստի պատճառով և ընտրութիւնների վերջնական արարողութիւնը՝ պատուիրակների գումարումը Դումայի անդամ ընտրելու համար, մինչև այժմս չէ յայտարարված։ Այս ընտրութիւնները առաջինն են մեր երկրում, անցեալ Դումային ոչ միայն չը հասան մեր պատգամաւորները, այլ տեղի չունեցան ընտրութիւնների սկզբնական արարողութիւնները, ընտրողների ցուցակներ յայտարարելը, պատուիրակների ընտրութիւնները և այլն։ Ընտրութիւնները Թուրքեստանում ունեն իրանց [illegible] վարեանը, որի վրա արժէ մի քիչ կանգ առնել՝ ցոյց տալու համար թէ ինչ պտուղ է Բուլիգին Վիտաէի սահմանադրութիւնը, բարեփոխած «ջնտամէն» մինիստրի օրօք և հեղինակորէն բացատրած կառավարական Սինատի կողմից...։

Վերցնենք, օրինակ, մեր երկրի Սիր-Դարեան շրջանը։ Ահա մի քանի ընտրող վիճակագրական տեղեկութիւններ քաղած հեղինակաւոր, էկս-պաշտօնական աղբիւրից (Й. И. Гейеръ. Путеводитель по Туркестану, Ташкентъ 1901 г.)։ Շրջանի բնակիչների ընդհանուր թիւը հաժաձայն 1897 համառուսական վիճակագրութեան՝ հասնում է 1,579,848 հոգու, որոնցից քրիստոնեայ՝ 58,489, մուսուլման՝ 1,416,418 և այլ դաւանութիւնների պատկանող՝ 4,940 անձ.։ Շրջանիս մէջն է գտնվում և Թուրքեստանի «մայրաքաղաքը», Տաշկենտը, որը, գուցէ ընթերցողս յայտնի լինի, բաժանվում է երկու ուրոյն բնակչութիւնների. հին քաղաքը, բնակեցված բացառապէս երկրի իսկական բնակիչներով՝ սարթերով, և նոր քաղաքը, ուր ապրում է գենեռալ-նահանգապետը, զետեղած են տէրունական հիմարկութիւնները և այլն։ Տաշկենտը գտնվում է այն 26 քաղաքների թւում, որոնց «շնորհված» է առանձնակի պատգամաւոր ընտրելու իրաւունքը։ Ցաւալի է, որ այդ քաղաքներից միայն Պետերբուրգը, Մոսկվան և Վարշաւան ընտրում են մէկից աւելի պատգամաւոր. նոյն իսկ Օդեսսան իր գրեթէ էկս միլիոն բնակչութիւնով չը ստացաւ երկրորդ պատգամաւորի մանդատը։ Պետական Դուման ուղարկում է մէկ պատգամաւոր, ինչպէս և 52 հազար բնակիչ ունեցող Կուրսկը։ Տաշկենտը իր երկու մասում ունի 156,414 հոգի, որոնցից ռուսական, «եւրոպական», քաղաքում կայ 25,000 հոգի, իսկ մնացածը հին քաղաքում։ Ինչպէս տեսնում էք, հին քաղաքը բաւական խիտ է բնակեցված և 26 քաղաքների թւում ընդունում է բնակիչների քանակութեան

կողմից 14-րդ տեղը։ Բիւրօկրատ-օրէնագիրը Տաշկենտին «չնորհել» է բացառակի իրաւունք՝ ընտրել երկու պատգամաւոր. մէկը հին քաղաքի կողմից, մէկը ռուսականից...։ Նկատենք, որ երկու մասերը կառավարվում են մէկ քաղաքային ինքնավարութեան ձևոքով։

Գանք ընդհանուր շրջանին։ Մա Պետական Դուման ուղարկելու է երկու անգամ։ Մէկը բուն տեղացիների՝ կիրգիզների եւ սարթերի կողմից, միւսը երկրումս բնակչութիւն հաստատած Եւրոպական Ռուսաստանից գաղթականների (բացառապէս գիւղէջ ռուսներ), պաշտօնեաների, եկեղ վաճառականների, երկաթուղային ծառայողների և այլ կողմից։ Ուրեմն մէկ միլիոն 390 հազար տեղացիները Դումայում այնպէս են ներկայացրած, ինչպէս ոչ աւել քան 33 հազար երկրում պատահակի ազրողներ...։

Զարմանալի չէ, որ այս պայմաններում առաջադրը գէմոկրատիայի կոչը՝ ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի ձայնատուութիւնը թէ խաչաբած կիրգիզի, թէ երկրագործ և վաճառական-արդիւնաբերող սարթի սրտերին պիտի մօտ լինի, ինչպէս և է խանգէս։

Մենք դեռ կը վերադառնանք ընտրութիւններին։

Պետրոս Զաքարեանց

ՆԱՄԱԿ ԴԱՆԶԱԿԻՑ

Փետրվարի 1-ին

Դեներալ Բաուէրը շատ կոլուզ կերաց հայ հասարակութիւնից պահանջում է Լօլանձէի սպանութեան համար որոշված տուգանքը և ինչպէս նաև այդ սարիթով մասնաւոր անձանց կրած վնասները։

Հայ հասարակութեան ներկայացուցիչները ամեն տեսակ միջոցներ չեն խնայում միայն թէ կատարված տեսնեն գեներալի հրամանը, սակայն, մի շարք յարգելի խոշընդոտներ հնարաւորութիւն չեն տալիս շուտափոյթ կատարելու Բաուէրի պահանջները, այն էլ այդքան կարճ ժամանակամիջոցում։

Այսօր երբ հասարակութեան կողմից նշանակված վաքիլները ժողված խորհրդակցում էին (յաջորդարանում) այս հրատապ ցաւերի մասին, ներս մտան զնդապետ Սաֆօնովը, ոստիկանապետը և թաղական պրիստաւները և ներկայ եղողներին յայտարարեցին Բաուէրի հրամանը, որի գլխաւոր կէտերը հետևեալներն են։

Եթէ այսօր մինչև երեկոյեան ժամի 9-ը հայ հասարակութիւնը չը ներկայացնէ գենեռալ-նահանգապետին 8133 ր. 80 կ. տուգանքը, այն ժամանակ հետևեալ ռաւօտեան ժամի 9-ից, էկզեկուցիան կը դնվի 62 քաղաքացիների տան վրա, իւրաքանչիւր տնում կէս բուռ (50 գիւտոր կամ 50 կօպէկ իրանց ձիւռով) իրանց սպանողով, որոնց համար տնատէրերը պէտք է հոգան նրանց ուտելիքը, լուսաւորութիւնը, վառելիքը և այլ պատոյներ, ինչպէս գենէռների համար տեղաւորն է, կամ նրանց համար յատկացված սենեակները, ինչպէս նաև ձիերի համար դամբերը և նրանց կերը։ Այն տանտէրը, երբ կը ներկայացնէ 150 բուբլին, այն ժամանակ էկզեկուցիան այդ տնից կը փոխադրվի մի այլ տուն, որոնց ցուցակը քաղաքային վարչութիւնից նախօրօք վերցրված է։ (62 տունը բաժանված է երկու էշսի, այն է նախ կը դնվի 31 տան վրա։

Միաժամանակ յայտարարից, որ տուգանքի է դրված 3100 բուբլի Բաղդասարեանի տան վրա, որտեղ ռումբեր են գտնվել, և 150 բուբլի Նրան կից տնատէրի վրա. գենեռալ-նահանգապետը հրամայել է անմիջապէս այդ տունը ծախել և այդ գումարը լրացնել։

Գնդապետի հաշով, իւրաքանչիւր տան վրա դրած էկզեկուցիայի համար ծախս կերթայ տասնուհինգ 25 բուբլի օրական։

Հասարակութեան ներկայացուցիչները այս յայտարարութիւնը լսելուց յետոյ, խմբերի բաժանվեցին, փողերը ժողվելու համար. ոմանք խնդրեցին ոստիկանապետից տալ 10 զօրաղօվներ խմբերին աջակցելու. ոմանք գնդապետից զենէրներ պահանջեցին, բայց մերժում ստացվեց։

Մուսայ երէկվան թղթակցութեանս մէջ յիշատակելու, որ երբ հասարակութեան ներկայացուցիչները ներկայացան Բաուէրին խնդրելու, որ ժամանակ տրվի տուգանքները ժողովելու, գենեռալը ի միջի այլոց յայտնեց, որ ինքը յոյս ունի, որ չնորհիւ հայերի ներքին կազմակերպութեան, շուտով տեղի կունենայ փողերի հաւաքումը։

Այսօր մինչև երեկոյ խմբերը հազիւ հազ կարողացան ժողովել 2000 բուբլին, որը ժամի երեկոյեան 9-ին տարան ներկայացնելու Բաուէրին, խոստանալով Ռացեալը վաղը ներկայացնելու։

Տեսնենք յարգելու է ժողովրդի խնդիրը, թէ վաղը գնելու է էկզեկուցիան։

Սագան

3. Դ.—Այս ըսպէիս հաստատապէս իմացայ, որ գենեռալ Բաուէրը լսելով հայ հասարակութեան ներկայացուցիչ պ. Ա. Թէմուրեանի բացատրութիւնը, անմիջապէս իր մօտ է հրաւիրել գնդապետ Սաֆօնովին և հրամայել էկզեկուցիան յետաձգել մինչև շաբաթ օրը, առաւօտեան ժամի 10, նախօրօք ազնիւ խօսք առնելով Թէմուրեանից, որ շաբաթ օրը բերելու է խոստացած դումարը։

18 տարեկան մի թուրք պատանի մօտ երկու ամիս է, որ անցել է հայոց մասը և խնդրում է իրան քրիստոնէացնել։ Մնողները իշխանութեան միջնորդութեամբ քանիցս անգամ պահանջել են իրանց տղային և հայերը յանձնել են նրան Սաֆօնովին, մինչև անգամ առանձնապէս խնդրել, որ յանձնէ իր ծնողներին, սակայն պատանու թախանձանքով խնդրին զիջանելով, մինչև օրս նա ապրում է հայերի մօտ և ինդրում է իրան ուղարկեն էջմիածին կարդալու համար։

Այսօր երբ նա ըստ սովորականին կանգնած է լինում փողոցում, նրան մօտենում են երկու պարսիկներ, ուզում են սպանել, բայց պատանուն աջողվում է փախչել։

Մազալուն այն է, որ եթէ սպանվէր պատանին, այդ դէպքումն էլ զուցէ պատանու ծնողները, բարեկամները անմեղ զանուկներ ձեռնային և տուգանքների հարց բարձրացնէին նահանգապետի առաջ։

Սագան

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Երգչուհի օրիորդ Պապայեանի եւ նոա նor սպանութեան գործը

—

Նախագահը դիմեց Թաղիեվին։

—Այդ բոլորը լսելուց յետոյ ընդունում ես արած յանցանքդ։ դու ես սպանել։

—Ո՛չ, չեմ ընդունում։ Ես սպանութիւնով չեմ զբաղվում. ես մարդասպան չեմ—եղաւ մի խիստ յանգուն և համարձակ պատասխան։ Նորը կրկնեց երկրորդ մեղադրեալը։

Ակամ ընթերցանութիւնից ճնշված բազմաթիւ երկսեռ ինտելիգենտ հասարակութիւնը բռնչական դայրոյթ զգաց. հանդիսականների շարքերում բռնչական շշուկ անցաւ, լսելով Թաղիեվի յարդնութեամբ լի հակիրճ պատասխանը։

Հետևեալ աւելացող բաղմականների մէջ կորզը պահպանում է ոստիկանութիւնը։ Թէ դրսի և թէ ներսի մուտքերը պահպանում են զինված պահակներ. բայց և այնպէս հասարակութեան զօրեղ հոսանքի ճնշումից ջարդվում են դատարանի դռների և պատուհանների ապակիները։ Ներկայ է ոստիկանապետը։ Մի քանի բռնչով երկաց և նահանգապետը։

Սկսվում է վկաների հարցմունքը։ Երդումն ընդունելուց յետոյ, առաջին ցուցմունքը տուեց Պապայեանների ազգախնի՝ Պրեանիկովան։

—Առաջին անգամ եկան դեկտեմբերի 28-ին, երեկոյեան 6 ժամին երեք հոգով և հարցրին—ով կայ։ Իմանալով, որ տէրերիս մօտ հիւր կայ, նրանք հեռացան, ասելով—մի տեղ, որ մենք եկանք։ Նրանց օր. Պապայեանը նեղս կանչեց. ուսանողը ձեռքով արեց, ասելով—մենք միւս անգամ կը մտնենք։ Սրանից երկու օր անցած, դարձեալ նոյն ժամին պատուհանս ծեծեցին։ Նոյն երեք անձն էին. անունները չը յայտնեցին։ Տատանվում էի բանալ դուռը, յետոյ բաց արի։ Երեքն էլ ներս մտան. ես դուռը փակեցի։ Հարցրին—ինչ են անում պարոնները։—թէյ են խմում։ Ուսանողը հարցրեց՝—Օրիորդը տանն է։ Դրան պատասխանեց,ասաց—Ոչինչ,—վերադարձան և երկուսով ներս մտան սեղանատունը։ Իսկ երրորդը՝ հասպիկը մնաց ինձ հետ նստած։ Նրանք շատ լաւ էին հագնվված և որովհետև ես խոհանոցն էի սպասակցնում, մինչև անգամ հասպիկ պարոնից ներողութիւն խնդրեցի, որ նրա վերարկուն չեմ ընդունում, ձեռներս գաղտ լինելու պատճառով։ Յետոյ ձեռներս սրբեցի։ Նա շատ ծանր էր հանվում. այդ ժամին ես նրա կատեցի, որ ուսանողը ձեռքը բարձրացրեց պարոնիս վրա. դրան հետևեց օրիորդի ձէոցը։ Բաց արի դուռը, զուրս վազեցի բակը, աղաղակելով, — սպանում են, սպանեցին—Հասպիկ պարոնը վազեց եռեխցս, ես վայր ընկայ, նա բռնեց քունցքիցս, ես մի կերպ դուրս պրծայ ձեռքից։ Նա յետ դարձաւ սենեակ։ Երբ 20 րոպէից ինձ ցոյց տուին ձերբակալված ուսանողին, ես ճանաչեցի նրան, սարսափահար աղաղակեցի—այդ ինչ արիր, ինչու սպանեցիր։

Դատապետ.—Ճանաչում էք գրանց։

—Այո, գրանք են։

Նախագահ.—Լաւ նայեցէք, չէք սխալվում արդեօք։

—Չեմ սխալվում, հէնց դրանք են։

Թաղիեվ.—Սուտ է, սուտ. եթէ տեսել ես, ինչ գտնել էր մեռուսնում։

—Ես գտնել։

—Սուտ է, մի աչքով ինչպէս կարող էր գտնը նկատել (աղախինը միականի էր)։ Եթէ նա վայր ընկաւ, ով կը թողնէր նրան առանց սպանելու... Թաղիեվը այդ միակ վկային չէր թողնի... կը սպանէր նրան...

Այդ խօսքերը արտասանելիս, նրա աչքերը զայրոյթից ընդլվեցան, ձայնը բարձրացրեց և նման էր վանդակում փակված գազանի։ կարծես նա փրփուրը բերանին, զժգոհում էր նաև իր արած սխալ քայլի վրա, որով իր ձեռքից ազատված զոհը իր դէմ կանգնած մեղադրում էր նրան։

Նախագահ.—Մի վրդովիր, հանգիստ խօսիր.—ապա դարձաւ միւսին.

—Մամիշ-բէկի, դու եղել ես Պապայեանի տանը։

Դռան մէջ անգամ չեմ եղել. գնացի միայն երկրորդ անգամ և այն էլ Թաղիեվը մեզ հետ չէր. ես երկու հայի հետ էի։ Ահա թէ ինչպէս էր։

Այդ օրը ճաշին մեզ մօտ եկաւ Մաթուսովը։ Միասին ճաշեցինք, երկու շիշ գինի, մի շիշ օղի խմեցինք, հարբեցինք։ Յետոյ երեքով միասին դուրս եկանք զբօսնելու։ Ճանապարհին հայոց Պետրոս-Պօղոս եկեղեցու մօտ մեզ մի օրիորդ պատահեց։ Թաղիեվը հետը խօսեց և մեզ ասաց—ես դրա հետ ուզն եմ դառնում։ Մաթուսովի հետ երկուսով շարունակեցինք մեր ճանապարհը։ Գիւղեցչկի կամուրջի վրա մեզ պատահեց Մաթուսովին ծանօթ մի հայ, որի անունը չեմ յիշում և որին մի անգամ էլ պատահել եմ. երեքով գնացինք, հասանք Զինգերի մագազին։ Մաթուսովը ասաց.—ես այս տանը մի ծանօթ օրիորդ ունիմ, գնանք նրա մօտ մի քիչ ժամանակ անցկացնենք,յետոյ վերցնենք նրան ու գնանք զբօսնելուս չը գիտէի, որ այդ օրիորդը Պապայեանն է։ Մաթուսովը բաղխեց պատուհանը, տան այս ադախինը բացեց դուռը։ Ես վերարկուս չը հանեցի, Մաթուսովը հանեց։ Մտածներովս, տեսանք, որ այդ մեր տեղը չէ և մի պատկառելի ծերունի նստած է սեղանի մօտ։ Ես միայց դրանը, Մաթուսովը առաջ անցաւ, բարեւեց օրիորդին, իսկ մեր երրորդ ընկեր հայը միայ նախանանեակում վերարկուն հանելու։ Հայերէն չը գիտենալուս պատճառով, չը գիտեմ, ինչ խօսեց Մաթուսովը և ձեռքը բարձրացրեց խփելու ծերունուն։ Օրիորդը աղաղակեց և Մաթուսովը յարձակվեց օրի որդի վրա։ Ծերունին էլ ընկաւ ինձ վրա, խփեց և վերարկուս պատռեց։ Ես էլ բռունցքով մի լաւ հասցրի նրան ու դուրս փախայ։ Իմ հետից դուրս վազեց և փոքրիկ աղջիկը։ Այն ժամանակ մեր երրորդ ընկեր հայը ներս մտաւ Պապայեանի սեղանատունը։

Նախագահ.—Ի՞նչու Պապայեանների մօտ գնացիք։

Մամիշ-բէկ.—Գնացինք հիւր, որ յետոյ օրիորդի հետ գնանք զբօսնելու։

—Ի՞նչպէս է, որ հիւր գնացիք և յանկարծ մարդ սպանեցիք (ծիծաղ ներկայ եղողների մէջ)։ Այնուհետև նախագահը ուշադրութիւն է հրաւիրում այն բանի վրա, որ Մամիշ-բէկի ներկայ ցուցմունքը խիստ տարբերվում է մեզ։

Դատապետ.—Ինչպէս դուք ասացիք, որ դուք գնացիք հիւր, բայց

է տապալել թշնամուն,—անխոհեմություն է։ Ես մեծագրություն չունեմ խորհուրդներ տալու իմ կողմից այդ կը լիներ մեծ անհամեստություն։ Այնուամենայնիվ ես համարձակվում եմ դիմել ձեզ, ելեւոփոխական գործիչներ, համերաշխության կոչով։ Մի՞ութեան մեջ է ոյժը։ Ես գիտեմ, որ ձախակողմյան կուսակցությունները իրանց հաշիւները իրար հետ դեռ չեն մաքրել։ Ես հասկանում եմ, որ նրանց հարկաւոր է մաքրել։ Բայց յետաձգեցեք այդ հաշիւների մաքրելը մի ուրիշ աւելի բարեյաջող ժամանակի։ Դուք նրանց մաքրել կարող եք յետոյ էլ։ իսկ այժմ միահամուռ գրոհով տապալեցէք թշնամուն։ «Jeu de paume»-ի երդման ժամանակ չափաւոր, հեղ Բայլին միացաւ կրակոս, անվախ Ռօբեսպիերի հետ։ 1871 թվի պարտութիւնից յետոյ, մերը, թեւում էր, որ Ֆրանսիան խորտակվեց արտաքին և ներքին բնակչության զրոհից, Բլանկին, այդ անհաղթ Բլանկին մէկնեց իր ձեռքը իր համար այնքան սաւելի բուրժուազիային, միայն նրա համար, որպէսզի միասին հանրապետություն հիմնեն։ Ես ես հաւատում եմ, որ ռուսաց օպոզիցիան, անցեալ Դումայի փորձից խրատված, կը մտնի մինչև անհրաժեշտությունն ու ամբողջ ոյժը նոր, ազատ պետական կարգի հաստատելու համար»։

Ռմ ճանաչում է Ժորէսին, ուստի աջողվել է երբեմնի խել նրա ճառը պատասում և բոլոր միլիոնատերում, նա չէր կարող չը զգալ, որ այդ երեկոյ ճառախոսը խոսում էր մի առանձին ոգևորությամբ, ներքին հրով, սիրոյ և յարգանքի անագին ոյժով դէպի ռուսաց յեղափոխությունը։ Եթէ Ռուսաստանը ունի բարեկամներ Ֆրանսիայում, այդպիսիներից անպայման առաջինը և ամենահաւատարիմը, ի հարկէ, Ժորէսն է։

Լսարանը լարված ուշադրությամբ հետեւում էր Ժորէսի ճառին և միաձայն ընդունեց նրա առաջարկությունը հեռագիր ուղարկել շվեդական արտաքին գործերի մինիստրի անունով, խնդրելու նրան չը թողնել որ ռուսաց էմիգրանտ Զերնեակինին, որը կալանավորված է Սուսկհոլմում, որպէսզի յանձնեն ռուսաց կառավարությանը։ Զերնեակինին մեղադրում են, Պետերբուրգի Ֆօնարնի փողոցում կազմված կողոպուտի մէջ, մինչդեռ նրա բրեկամները հաստատ ապացոյցներ ունեն, որ նա այդ կողոպուտին մեղակից չէ։ Նրանք գիտում են արել արևմուտքի հասարակական կարծիքին։ Բացի յիշեալ հեռագրից, մի ամբողջ շարք հաստատություններ և առանձին գործիչներ իրանց բողոքն են ուղարկել բրիկտագի նախագահին։ «Մարդկային իրաւունքի լիգան» «Ռուսաստանի բարեկամների ընկերությունը» (Անատոլ Ֆրանսի և Ոլէսանսէի ստորագրությամբ) միջամտել են Զերնեակինի գործի համար։ Վերջապես լինի յայտնի է, որ Բրանդէսը, Բիեօրնսոնը և շատ ուրիշ յայտնի և շվեդացիներին սիրելի գրողներ և հասարակական գործիչներ շվեդական մամուլի միջոցով իրանց բողոքն են յայտնել։

Ուրախ և գոհարթ հեռացաւ ասպնջականությունը այդ հեռաքրքիր միտինգից. իսկ ֆրանսիացիները չը կարողացան չը նկատել, որ Ժորէսը վաղուց է որ այդպիսի ոգևորությամբ չէր խոսել։

(«Телеграфъ»)

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԴԱՒԱՌԻՑ

Վերին-Ադղան, յունվարի 1-ին

Մեր գրոցը հանդիսաւոր կերպով տօնեց 1907 թ. տարեմուտը։ Ժողովրդի մեծ բազմությունն լցրել էր ուսումնարանի դահլիճը։ Առաւօտը ժամը 10-ից սկսվեց աշակերտական գրականական ցերեկոյթը, որը շարունակվեց մինչև երեկոյանը ժամը 2-ը։ Աշակերտները բաւական աջող կատարում էին չափաւոր և թէ աբեակ յօդուածների արտասանությունները և թէ խմբական ներդաշնակ երգեցողությունը։ Գ. ուսուցիչը ընդունուր դեղով նկարագրեց համայնքի հասարակական գործունեության հաշուեկշիռը 1906 թ. տարեշրջանում, բացատրեց Վ. Ադղանի հասարակական կեանքի առաջադիմական և բացասական կամ յետադիմական կողմերից մի քանի օրինակներ, իսկ վերջում պ. ուսուցիչը խրախուսեց հասարակության առաջադիմական աջող քայլերը և յոյս յայտնեց աւելի աշխոյժով և եռանդով առաջ տանելու ազատդայում հասարակական հանրագրամ գործունեությունը։ Հանդէսի վերջում բոլոր աշակերտներին միրգ բաժանվեց։ Հանդէսը վերջացաւ քահանայի պահպանիչ աղօթքով։ Ժողովուրդը գոհ սրտով և ուրախ տրամադրությամբ տակ ցրվեց դպրոցից։

Դպրոցի հոգաբարձուներից պ. Բ. Մելիքսեդեկեանցը և Գ. Գէորգեանը աշակերտների խմբով «Աւետիս» ման եկան յօգուտ դպրոցի, որից մուտք եղաւ 17 ռուբլի 51 կոպ. Ծախքերը չը հաշուած։ Այստեղ բարեխղճությունը պահանջում է դնահատել և խրախուսել պ. Մելիքսեդեկեանցի և պ. Գէորգեանցի եռանդուն և անձնուէր գործունեությունը, որոնք չընկճվեցին, չը թուլացան իրանց բարի մտադրությունից, ոչ ընկերների եթէական, անորոշ պատասխաններից, ոչ ծաղրական բամբասանքներից և ոչ էլ ֆիզիքական զրկանքներից ու նեղություններից, այլ պատուով կատարեցին իրանց ստանձնած պաշտօնը՝ այն է ծառայել հասարակության և դպրոցի շահերին։

Դաւ.

ԴՈՆԵ ԲԱՀՐԱՆ ՄԻ ՊԱՀԱՆՋԻՐ

Հին-Նախիջևան, յունվարի 25-ին

Հին-Նախիջևանի դաւառի կողոպտված հայ գիւղացիաց պակասությունը օր աւուր զալի է լինում. եթէ Նպատամատոյց Ցանձնաժողովից հացի մատակարարելը դադարի, սովն անխուսափելի է, բայց չնորհիւ այն բանի, որ տեղական մամանաժողովը յաջողաբար կարիք եղած տեղերում շտապով հաց է հասցնում, զրանով պաշտպանում է աւ այժմ ոնասապէս բոլորովին քայքայված և կորստի մատնված խեղճ գիւղացիությանը։ Ցուսալիությունից, ոչ ընկերների եթէական, անորոշ պատասխաններից, ոչ ծաղրական բամբասանքներից և ոչ էլ ֆիզիքական զրկանքներից ու նեղություններից, այլ պատուով կատարեցին իրանց ստանձնած պաշտօնը՝ այն է ծառայել հասարակության և դպրոցի շահերին։

Դաւ.

ԳՈՆԵ ԲԱՀՐԱՆ ՄԻ ՊԱՀԱՆՋԻՐ

Հին-Նախիջևան, յունվարի 25-ին

Հին-Նախիջևանի դաւառի կողոպտված հայ գիւղացիաց հացի պակասությունը օր աւուր զալի է լինում. եթէ Նպատամատոյց Ցանձնաժողովից հացի մատակարարելը դադարի, սովն անխուսափելի է, բայց չնորհիւ այն բանի, որ տեղական մամանաժողովը յաջողաբար կարիք եղած տեղերում շտապով հաց է հասցնում, զրանով պաշտպանում է աւ այժմ ոնասապէս բոլորովին քայքայված և կորստի մատնված խեղճ գիւղացիությանը։ Ցուսալիությունը թաղաւորում է. պանդխտության թիրը շատանում է. մուրացիկների խմբերը են դիմում այս ու այն կողմ ողորմություն խնդրելու. կարիքը մեծ է, միայն զգալի. 20-ի չափ գիւղեր են աւերված, որոնք նոր են զգում իրանց թալանվելը, նոր են զգում, որ իրանց միլիոնների տէր էին և այժմ մնանված սովի և եթէ մի փոքր ժամանակով հաց մատակարարելը դադարի, ամբողջ գիւղերով յաւիտեան կորած են։

Խեղճ գիւղական ժողովուրդ. այժմ մտիկ արա, տես այն միջոցին, երբ մեզ ու կեանքդ երիրիզ մէջ քո հարազատ օջախում սովը բզիկ է չոքել և միմիայն օտար աշխարհում ապրող քո արիւնակից եղբայրն է օգնություն ձեռք մեկնում օրեկան մի կոր չոր հաց տալով, որ կարողանա արիաբար կուելով ոչնչացնել մահաբարուռ սովի բանակալ իշխանությունը, մշակելով պտղաբեր խոպանացած դաշտաւայրդ, վերականգնես քայքայված տնտեսությունդ։

Խեղճ անբեղտ ժողովուրդ. սովի սոսկալի ճիրաններում խրխռում ես։ մի բերան քաց չես անում ասելու թէ՝ «ախը էսքան տարի հնչ հնազանդությամբ կատարել ենք կատարվորության ամեն մի պահանջը և գանձարանը լցրել ենք մեր ճակատի քրտինքով, գոնէ այս օրհասական բոպէում փոխարինաւոր ձեռք մեկներ, ազատէր մեզ վտանգից, և կամ թէ ինչու համար էր կողմված այն կամիսիան, որը 1·05 թ. ազատից յետոյ շրջեց գիւղ գիւղ, տնէ տուն և արձանագրեց բոլոր վնասներն ու մեղաւորների անունները. այդ վնասները մի քանի տասնեակ միլիոնների է հասնում, եթէ սովի դէմ մղվող գոյությունն կըռուում մի ամենաչնչին մասն էլ չը պիտի ստանար մեր գոյությունը պաշտպանելու, հապա ինչ էր նշանակում այդ կամիսիան»։

Այդ դեռ տասերի է, անտասելին այն է, որ երբ ժողովուրդը օրհասական կռիւ է մղում սովի դէմ, ընդհանուր այն բանի՝ որ թալանված է և ոչ մի միջոց չունենալով հողագործությունը երեսի վրա է ընկած և դաշտերը բոլոր խոպանացած են. այդ դէպքում ևս անլեզու գիւղացին պարտաւոր է իր խանին բարձր տալ՝ և ինչպես կարող է չը տալ, քանի որ գիւղացին ստանում է օգնություն (ցորեն), ուրեմն կարող է այդ ստացած օգնությունից բահրան հանել, չէ որ խանի եկամուտն էլ է պակասել։

Ազատ-աղա Զիվանշիրը Նորսի պէս գիւղից տարեկան 200-250 խալվար ցորեն բահրա էր վերցնում, իսկ այս մի երկու տարի է, ինչ ոչինչ չի ստացել։ Ինչպես չը պահանջել, թէկուզ ամբողջ աշտարն էլ խոպանացած լինեն։ Բայց չէ, Ազատ-աղա, մի քիչ էլ ուամ ունեցիր, մենք էլ քո ժողովուրդն ենք, մենք էլ այժմ մենք ենք տուել, այս օրհասական բոպէում էլ եթէ որ չես ուզում օգնել մեզ, գոնէ խոպանացած դաշտերից էլ բահրա մի ուզիր։

Իսկ դուք, տարաշարհում ապրող հարազատներ, մի բպէ մոռաք մեր դրությունն մէջ և մի զլացէք ձեր օգնությունը հասցնել, որ մենք էլ կարողանք այս անհաւասար կռուում յաղթող հանդիսանալ, մեր սրված մաճը բռնել, մեր արգասնդ դաշտերը մշակել և վերստին հաստատվել մեր աւերված հայրենիքում։

Թալանված գիւղացի

ՆԱՄԱԿ ԿԱՄԱՆՕՎԴՈՒՍԿԻՑ

Յունվարի 30-ին

Կրասնօվոդսկից 7 վերստ հեռաւորության վրա գտնվում է Ուֆքրան. դա մի փոքրիկ տեղ է, ուր բացի մի քանի փայտի և կրաքարի պահեստներից, ուրիշ ոչինչ չը կայ. մի քանի տասնեակ բնակիչներից 7—8 տուն հայեր են, բոլորն էլ զործակատարներ զանազան ֆիրմաների. և ահա այստեղ էլ Դաշնակցությունը իր հերոսներն ունի, այստեղ էլ նոյն բանի ոյժը, նոյն կամայականությունը. մարդ մնում է ապշած. բանության դէմ կռիւ տուողները... իրանք են բանության զոհ դառնում. մինչև Ֆրը, Դուբ, ռուսաֆիլիօկրատիայի պէս, կարծում էք ընդ միշտ կը մնար ձեր բարձրության վրա. ոչ, սխալվում էք, ինչպես այսօր ամբողջ Ռուսաստանն է կանգնել բիւրօկրատիայի դէմ, նոյնպես էլ վաղը ձեր հլու հպատակները ձեր դեմ կելնեն։

Անցեալ 29-ին Ուֆքրում կռանքը եռում էր. դաշնակցականները դէս ու դէն էին վազում. այդ օրը Նրանց համար փառաւոր օր էր, պիտի Ուֆքրա գար կոմիսան հերոսներից մէկը, որը հայ-թրքական կռիւներում մեծ հռչակ էր ստացել։ Գալու նպատակը պարզ էր—նրության օգնություն... Դաշնակցությունը օր առաջ պատրաստություն էր տեսել, ցուցակներ կազմել, ճոխ սեղան պատրաստել։ մեծ հիւրին հիւրասիրելու։ Ճաշի էր հրաւիրում ամբողջ Ուֆքրի հայ հասարակությունը առանց սեռի խտրության։ Հացկերոյթից յետոյ, օրվայ հերոսը առաջարկում է իր պատանքը, կարդում է նախօրեն պատրաստած ցուցակը, թէ ումից ինչքան պիտի ստացվէր։ Տիրում է վայրկենական լռություն։ Ներկայներից մէկը նկատում է, որ ինքը առանց իր գլխաւոր դրամատնակի կարգադրության իրաւունք չունի վճարելու այդքան գումար և խոստանում է հեռագրով թոյլատրություն ստանալ և ապա վճարել։ Այդ յանդգնն պատասխանի համար բոլոր սեղանակից դաշնակցականները փրփրում են և ամեն կողմից լսվում բոլոր ձայներ։ Պարտը ինչքան ուզում է հասկացնել, որ ինքը ծառայող է, այդպիսի իրաւունքներ նրան չեն տուած, հաւատակ դէպքում նա կարող է զրկվել պաշտօնից... Բայց իզուր. մեր սոցիալիստ դաշնակցականները, բանուորության, հասարակ զասակարգի շաներ պաշտպանողներ չէին ուզում հասկանալ ու գոռում գոչումով խեղդում էին խեղճ պարոնի ձայնը.—մենք կառնենք և ցոյց կը տանք քեզ,—ահա նրանց կարական պատասխանը։ Մի երկրորդ պարոն հարց տուեց. արդեօք այդ օգնությունը, որ խնդրում էք, կամաւոր է թէ ստիպողական,—պարոններ դաշնակցականները լալիվեցին. ի՞նչ պիտի պատասխանեին բանապետականները. առանց պատասխանի էլ հարցը պարզված էր։ Դժգոհների թիւը շատ էր. այդ նկատեցին պ. դաշնակցականները և առանց մի կօպէկ ստանալու քաղաքից, եկած չէֆերը նորից բարի ճանապարհ ընկան։

Մ. Տէր-Օհանան

ԲԱՑ ՆԱՄԱԿ ԲԵՆԻԿ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ

Սիմֆերօպոլ, յունվարի 8-ին

Օգի-Խիյոնաճի վանքապատկան հողերի աճրդի ողջ գործը կատարվել է իմ աչքերի առաջ և ես, ինչպես Սիմֆերօպոլի հայերի հասարակական գործերով փոքր ի շատէ հետաքրքրվողների մեծամասնությունը, լաւ տեղեակ եմ այդ խնդրին։ Կարդալով «Հովիւ» շաբաթաթերթի № 29-ի մէջ ձեր պատասխանը մեր երեսփոխան պ. Քուշնարեանին, ես ապշեցայ ձեր տեսի առաջ, իսկ ձեր պատասխանները ձեի մասին երկու կարծիք չէ կարող լինել և նա այդ պատասխանը քիչ բան է աւելացնում ձեր պատուին։ Դուք ճգնում էք (և բոլորովին ի զուր) ապացուցանել, որ վանքապատկան հողերը վերցնել կամեցող անձինք իրանց անձնական շահի համար էին ընկած և ուզում էին շահվել՝ բարեգործության դրօշակի տակ։

Մեր հոգևորականության (ի հարկէ՝ ոչ բոլոր) արշինով չափել այն մարդկանց չէ կարելի։ Կան մարդիկ, որոնք անհրաժեշտության դէպքում կը հանանան, որ հողի ամբողջ վերցնելու պայմանագիրը կազմել և արտագրել եմ ես և այդ պայմանագրի մէջ պարզ ասված է, թէ հրատեղ էր գնալու հողից ստացված արդիւնքը, թէ հրպիսի հասկացողություն (կօնարօլ) էր լինելու և այլ մանրամասնություններ։ Երբ մի քանի անձանց մէջ մեր յոյսը վերցնել վանքապատկան հողերը, պ. Քուշնարեանը քաղաքում չէր, բայց այդ անձինք՝ լաւ գիտենալով, որ նա չի հրաժարվի մասնակցել բարի գործում աղքատներին օգնել, առանձնորդին տուած իրանց առաջին հեռագրի տակ նրա ազգանունն էլ տեղաւորեցին։ Ես պ. Քուշնարեանը, քաղաքը վերադառնալով, ամենայն պարտաւորությամբ հանձնեցի մասնակցել այս բարի գործին։ Որ այդ բոլոր մարդիկը կամենում էին անշահասիրությամբ ծառայել բարեգործությանը՝ կը հաստատեն թէ նրանց բարեկամները և թէ թշնամիները, իսկ դուք ձեր վերաբերմունքով սպանեցիք մի գեղեցիկ գործ։

Այս էլ կայ, որ մեր սիրելի հոգևորականությունը (սակաւ բացառությամբ), ինչպես այս դէպքում, նոյնպես և ընդհանրապէս, ցոյց է տալիս իրան այնպէս, ինչպես որ գիտէ ձեզ ոգը, այսինքն՝ դուք եղել էք մշտապէս տգեղ նողներ ոնիպան բարիքի համար։

Ս. Ց. Գեորգեան

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Գուդաուտ

«Ծամանակ» թերթը իր № 25-ում զեստեղել է Անապայից մի տարօրինակ թղթակցություն, որի նպատակը բացարձակ պրովոկացիայից ուրիշ ոչինչ չէ կարելի համարել։

Ես տարներ ապրած լինելով Սև-ծովի ափերի մի քանի քաղաքներում, ինչպես և Անապայում, շատ մօտիկ ծանօթ եմ Անապայի կեանքին և յիշեալ յօդուածի հետ կապ ունեցող, բացառությամբ մէկի, բոլոր անձնաւորությունների։

Մէկդի թողնելով Շնորի դէմ ուղղած միտումաւոր ստոր յերիւրունքները, որոնցով հեղեղված է «Ծամանակի» այդ թղթակցությունը սկզբից մինչև վերջը, կանցնեմ իմ բուն նպատակին։

Ներկայ ուսումնական տարվայ սկզբին, թերթերի մէջ Գ. Ցոլսէփեանը յայտարարից, որ Անապայում բաց է արել մասնաւոր ուսումնարան։ Քիչ յետոյ «Նոր կեանք» շաբաթաթերթում լոյս է տեսնում մի կարճառօտ նամակ, որով նախ՝ մասնաւոր ուսումնարանը ինքնակոչ կերպով դասնում է «ժողովրդական ազգաւոր ուսումնարան», որի նոյնպես ինքնընտիր հոգաբարձությունն կազմից Տ. Մեսրոպեանը հրաւէր է կարդում հայ հասարակությանը՝ ինչ-որ երեկայական գրադարան-ընթերցարանի համար գրքերով ու բրօշիւրներով օգնություն հասնել։ Այդ աչքապուրության դէմ նոյն թերթի № 2-ի մէջ տպվեց մի ջախջախիչ յօդուած, որի մէջ անոր գաստերով յօդուածագիրը ցոյց էր տալիս թէ ժողովրդական ուսումնարանի, թէ հոգաբարձության և թէ դրադարան-ընթերցարանի զոյությունը, և հետաքրքրություն էր արթնացնում այն սեփականությունն էին դառնալու Գ. Ցոլսէփեանին և Տ. Մեսրոպեանին։ Նրանց այդ ստոր աչքապուրությունը երևան գալուց յետոյ պէտք էր սպասել, որ նրանք ամօթից կը կարմրեն և կը զղջանան, բայց «Ծամանակի» խմբագրությունը նրանց հեռաւորությունն առնց աւելի լրությունների մէջ ընկնելու։

Ներկայ ուսումնական տարվայ սկզբից առաջ անապացիներին, որպէս ուսուցիչ, բոլորովին անծանօթ Գր. Ցոլսէփեանը մուտ էր Սուխումի շրջանի Ծիբեյա գիւղում, որտեղ նրա և նմանների գործունեության պտուղներն էին այն սարսափելի եղբայրասպանությունները, որոնցով երկար ժամանակ զբաղվեց Թիֆլիսի հայ մամուլը։

Տեսնելով, որ այլևս անհնար է մնալ այդ շրջանում, որովհետև կարուկ կերպով գիւղացիները առաջարկել էին հեռանալ, Գ. Ցոլսէփեանը վերադարձավ հասարավեց Անապայում, որտեղ և, յատուկ իր տեմպերամենտի, կազմակերպեց մոլի ուժերի մի խմբակ, որոնց գլուխն անցած ամենասանձելի միջոցներով սպառնում է Անապան էլ հասցնել Ծիբեյայի սև օրին։ Ցանձին տիրահնչակ տէր-Պողոս քահանայ Մխիթարեանցի նա գտաւ մի զօրաւոր դաշնակցի։ Այդ երեակ դաշնակցությունը, կարծես, իրան նպատակ է դրել Անապան էլ ապրեցնելիությունների ասպարէզ դարձնել. գոնէ նշանները այդ են ցոյց տալիս։

Բայց բաւական է...

Ամենից աւելի ինձ ապշեցրեց այն հանգամանքը, որ «Ծամանակի» խմբագրությունը ամենասարբական հեռատեսությունը չունեցաւ իմանալու, թէ այդ թղթակցությունը ինչ ընտրություն է կրում և կամ այդ տպագրելով՝ ինչ է արած լինում։

Ուրիշներն ամենը նկատողությունների հանդէպ «մատնություն»... «դաւաճանություն»... գոռգոռացող պարոնները աւելի լաւ կանէին իրանց բացայայտ քայլերի արժէքը ըմբռնելին և իսկապէս մատնություն չանէին։

Արդէն ափսէրարա իրողություն է, որ «Ծամանակը» և իր կոյր երկրպագուները միանգամ ընդմիշտ կորցրել են իրանց բարոյական հեղինակությունը այն ժողովրդի աչքում, որին տիրացած և իրանց սեփականությունն էին համարում։ «Ծամանակի» և իր ծնողների ագէնտները, օգտվելով մասսայի տգիտությունից, սրա հաւատքը չարաչար կերպով շահագործում էին՝ «մեծ գործեր» կատարելու յաւակնությամբ։ Բայց բնական է, որ հասարակությունը միշտ նրանց կաթնատու կովը չէր կարող լինել։ Նա տեսնելով չափից ու սահմանից անց կացած զեղծումներ՝ գտաւ, որ իրան ամենասանբարեխիղճ կերպով խաբել են։ Դիւթական մի գաւազանի զօրությամբ ցնդվեց ամբողջ հայ հասարակությունը և իր ծոցում բոյն դրած, գաղափարական ու բարոյական դիմակի տակ ծածկված, այդ իսկապէս ֆնասակար բաղդախնդիրների կազմակերպությունն դէմ սկսեց մի բուռն արշաւանք. սոսկալի բողոքների ուժգին տարափով հաշիւ էր պահանջում նրանից և ընդհանրապես հասարակությունն առաջ բաց անում նրա հանցագործական գործերը։

Զգալով, որ իրանք անկման շրջանում են գտնվում, ամեն ներելի և աններելի միջոցներով կաշուից դուրս են գալիս իրանց նախկին հեղինակությունը ձեռք բերելու։ Մի կողմից «բիւրազգնում» են իրանց կողմակիցությունը, իսկ միւս կողմից աշխատում են մտքերի խառնաշփոթում առաջ բերել, մթագնել շրջապատը, որ կարողանան մթությունն մէջ իրանց գոյությունը պահպանել։

Սուխումցի

Թարվանսարա, յունվարի 8-ին

Թարվանսարայի շրջանի մանաժողովս գաւառիս Թաւբ-հայկական ընդհանրամների ժամանակ նոնասակվածների սովամահ ընտանիքների օգնի համար զանազան տեղեր խնդիրներ էր ուղարկել և օգնություն էր խնդրել, որից յետոյ ստացվեց Եւպատորիայից պ. Քուշնարեանցի միջոցով ժողովան 23 ռուբլի 60 կոպէկ։ Բացուեց Պ. և Տ., Գ. և Ե. Խալաթեանների միջոցով 10 ռ. և մէկ կապոց հանդերձեղէն։ Իսկ պ. Մելքոն Ասլիբեկեանից լսուեցաւ մեր զիւղի կիսաչէն եկեղեցու աւարտման 50 ռ.։

Յայտնում ենք նուիրատուներին մեր խորին շնորհակալությունը, յուսալով որ շատերը կը լսեն մեր ազաղակը և օգնություն կը հասնեն մեզ մեր ստանձնած ծանր գործում։

Ի դիմաց Մանաժողովի
Գանձապահ անդամ՝ Մ. Տէր-Մելիքսէթեան

Թիֆլիս, յունվարի 26-ին

Սրանով պատիւ ունիմ յայտնելու իմ յարգելի ծնողներին և ծանօթներիս, որ անցեալ դեկտեմբերի 21-ին ոլորեց թէ իմ տիրացու Տէր-Յակոբեան ազգով, որ ես էդ ազգով տիրացու չեմ ունեցած—մի կերպ նամակով զիմել է իմ մուսա պ. Թումանեանին և ստացել է 20 ռուբլի, ուստի զգուշացնում եմ այսպիսի դէպք պատահած ժամանակ ոչոքի չը ընդունել իմ անունս տակ, գրած կեղծ նամակը գտնվում է ինձ մօտ. փող կորզողը ինքն է ասած պ. Թումանին որ ազգ է տէր Յակոբիկ Թադէոս քահ. Երևանդեանց։

Թիֆլիս, փետրվարի 3-ին

«Մշակ»-ի № 11-ում Թադէոս քահ. Երևանդեանց ստորագրությամբ գրված նամակում ակնարկված է, որ «Թիֆլիսի տիրացուներից մէկը կեղծ նամակով փող է կորզել իր ծներից մէկից։ Այդ մասին ես տեղեկացայ վերոյիշեալ քահանայից, որ կեղծիք զործող տիրացուն իրան Տէր-Յակոբեան է անուանել...

Ուստի սրանով պատիւ ունիմ յայտնելու, որ արդի տիրացուների շարքում և Թիֆլիսի հայոց եկեղեցիներում այդ ազգանունով տիրացու չէ սպասաւորում։

Վերայի ս. Խաչի եկեղեցու
Սպ. Կարապետ Ղազարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Փետրվարի 2-ին կայացաւ «երեխաների խնամատար ընկերության ազգասարասի» նոր շինության օծման հանդէսը։ Հանդէսին ներկայ էին կոմսուհի Ե. Ա. Լօրենցօվա-Դաշկովան իր դստեր հետ, Թիֆլիսի նահանգապետ Ա. Գ. Զերնեակովին, քաղաքային վարչության անդամ Ա. Ի. Խատիսեանը, բարձր հասարակության կանայք, հոգաբարձական խորհրդի անդամները և ընկերության վարչությունը, քաղաքային զումայի ձայնատուներից մի քանիսը և ուրիշ շատ անձինք։ Մաղթանքից յետոյ, որի ժամանակ երգում էր Թիֆլիսի Իոդրէչկի կուսանցի երգեցիկ խումբը, հոգևոր ասվեց հանդուցեալ գ. խ. բժիշկ Օլենսուվոի յիշատակին։ Ապա ընկերության հոգաբարձական խորհրդի նախագահ Աբրօսիմովը դիմեց հանդիսականներին մի ճառով, ծանօթացրեց նրանց ապատարանի 7 ամեայ գոյության պատմության հետ, ապատարանի, որ սկզբում վարձու երկու սենեակներում փոքրիկ ճաշարան էր, ուր աղքատ երեխաներին տրվում էր միայն ճաշ և ապա (1905 թվից) բացվում է և գիշերային ապատարան, այնպէս որ ներկայումս ապատարանում երկու սենի բոլոր երեխաների թիւը հասնում է 69-ի։ Նրանցից 33-ը մշտապէս ապրում են ապատարանում, իսկ 36-ը երեկոներ են։ Ինչպես առաջինները, այնպէս և երկրորդները, ապատարանում սատանում են ձրի ճաշ, ուսում և շոր։ Նրանցից մեծ մասը բոլորովին որբ են։ Մինչև այժմ ապատարանը գտնվում էր վարձու տների մէջ—սկզբում Սապէօրնի փողոցում, ապա Անդրէէվսկի և վերջապէս Ցիմնազիալ փողոցում։ Այժմ՝ նոր շինությունը, որ մի յարկանի է և գտնվում է Իպատիյէվսկի և Սվէտաղօրսկի-Միրսկի փողոցների անկիւնում, բաւական մեծ պարտքով, նուիրել է հանդուցեալ բժիշկ Օլենսուվոի այրին, Մ. Ա. Օլենսուվան։ Իր ճաշի վերջում պ. Աբրօսիմովը շնորհակալություն յայտնեց նուիրողին առատ նուիրատուության համար և կոչ արեց բարեգործներին հետևել նրա օրինակին։ Ա. Ի. Խատիսեանը, պարզելով վերին աստիճանի սրատուչ խօսքերով ապատարանի նշանակությունը Թիֆլիսի ազգաբնակության ամենաաղքատ զասակարգի հանար, քաղաքային ինքնավարության կողմից շնորհակալություն յայտնեց զեկավարներին—յանձին պ. Աբրօսիմովի և յոյս յայտնեց, որ շնորհիւ վերջինների յատուկ եռանդի, ապատարանի գործունեության շրջանը անկասկած ծաւալ կընդունէ։

Կիրակի, փետրվարի 4-ին տեղի ունեցաւ Թիֆլիսի որբանոցամ ընկերության երեկոյթը Թիֆլիսի Արտիստական ընկերության դահլիճում։ Երեկոյթի առաջին մասը բաղկացած էր զրական-երաժշտական բաժնից, որին հետևեցին պարեր։ Հասարակությանը հետաքրքրեցին դիմակաւորները։ Հաւաքված էր բաւական բազմություն։ Կային օտարազգիներ։ Տիրում էր աշխոյժ և կենդանություն։

Մեզ խնդրում են տպել հետևեալը. «Հայոց Ազգային Ընկերության խորհուրդը ամսս 18-ին Արտիստական Ընկերության դահլիճներում տալու է բազմակողմանի և հետաքրքիր ծրագրով կազմած հագուստահանդէս-պարերեկոյթ։ Աչքի առաջ ունենալով հայերս մէջ այս միակ գիտական ընկերության գովելի նպատակները, ցանկալի է, որ երեկոյթը գրաւի մեծ բազմություն։ Երեկոյթի ծրագիրը կը յայտարարվի առանձին»։

Մեռելի բանում բանտարկված Մելքյէլեան տեխնիքական երկաթուղային դպրոցի ցուցիչ ընտրությունը Պետական Խորհրդի համար։ Քաղաքի մեծամասնությամբ ընտրվել են երեք հոգի. համալսարանի ռեկտոր Ի. Ի. Բորգմանը, Դ. Դ. Դրիմմ և Մ. Մ. Կովալևսկի։ առաջինները ժողովրդական ազատության կուսակցության են պատկանում, իսկ երրորդը դեմոկրատական բարեփոխումների կուսակցության։ («Р. В.»)

Յունվարի 31-ից Մոսկվայում վերստին սկսել են լոյս տեսնել «Новь», «Вѣкъ» լրագրները։

«Բակու» լրագիրը տեղեկություն է ստացել, որ վերջին ժամանակներս Նօբելի նաֆթահանքերում կաշառակերությունը սատսկի մեծ չափեր է ստացել։ Ասում են, որ արհեստաւորներում և նաֆթահորերում ծառայության մտնելու համար հարկաւոր է լինում վարպետներին 5—10 ռուբլի և նոյնիսկ աւելի կաշառք տալ։ Նոյնիսկ մարդավարել վարմունք տեսնելու համար հարկ է լինում կաշառել փողով թէ հիւրասիրությամբ այն բոլոր պարոններին, որոնք փոքր ի շատէ իշխանություն ունեն իրանց ձեռքում։

Բաքւում արդէն մի շաբաթ է, որ գործադուլ են արել Ռօսմօմեանի լուսանկարչական ծառայողները և առաջադրել մի շարք անտեսական պահանջներ։ Փետրվարի 1-ին Ռօսմօմեանը իր բոլոր ծառայողներին արձակել է, տալով նրանց մի ամսվայ ռոճիկը։

Փետրվարի 2-ին Բաքւում սկսել է լոյս տեսնել հայերէն լեզուով «Օրեր» օրաթերթը։ Մենք արդէն ստացել ենք նրա համարները։ Լրագիրը ծառայելու է պրօլետարիատի շահերին և հետևում է սօցիալ-դեմօկրատական կուսակցության «մեծամասնական» ուղղությանն։

Երևանում փետրվարի 2-ից սկսել է լոյս տեսնել ռուսերէն լեզուով պարբերական մի թերթ «Факты» վերնագրով, որը փետրվարի 19-ից սկսած դառնալու է ամենօրեայ։

Տաճն օրվայ դադարից յետոյ «Իրշադը» վերսկսեց իր հրատարակությունը։ Դադարման պատճառ էր եղել գրաշարների գործադուլը։ Իր վերբերումի սաթիով՝ Ամէդ բէգ Ադայեվը գրում է հետեւեալ տողերը. «Իրշադը» ստիպվեց իր հրատարակումը դադարեցնել գրաշարների և այլ ծառայողների գործադուլի պատճառով։ Այս օրվանից վեհը կարգադրված է և մենք կը սկսենք մեր գործին աւելի մեծ եռանդով ու ջանքով։ Մեզ մխիթարում է այս խնդրում այն, որ մեր դադարման ընթացքում ստացել ենք զանազան տեղերից, քաղաքներից անձկալից հեռագիրներ, որոնցով հարցնում են, թէ ինչ է եղել մեր դադարման պատճառը, ինչ փոքրանք է եկել մեր գլխին։ Այս երևոյթը, որ պատիւ է բերում մեր ամբողջ ազգին, շատ նշանակալից է։ Բայց, ափսոս, հազար ափսոս, որ մեր ազգի կացութեան և զղացումների միակ թարգման հանդիսացող այս լրագրի դժուարությունների հանդէպ հրվում են մեր շրջանում գտնվող և իրանք իրանց ազգի գլխաւորներ անուանող մի քանի սոր անձինք։ Բայց դրանք թող ապահով լինեն. «Իրշադը» ոչ մի անձի ազդեցությամբ, ոչ մի անձի դասով, ոչ մի խարդախի նենգությամբ չի ոչընչանայ»...

Փետրվարի 18-ին, Պետերբուրգում կայանալու է մի համերգ—երեկոյթ շատ հետաքրքիր և բազմազան ծրագրով, որ կազմվում է հայ հասարակությանն հայրենասէր տիկիններ մի խմբի նախաձեռնությամբ։ Այդ համերգը կազմակերպելուն եռանդուն մասնակցություն են ցոյց տալու հայ-ուսանողները և գլխաւորապէս ոչ անյայտ երգիչ Ց. Նալբանդեանը։ Համերգին մասնակցելու ցանկություն են յայտնել Պետերբուրգի երաժշտական և արտիստական աշխարհի աչքի ընկնող անդամները, ի թիւս որոնց և կայսերական թատրոնների արտիստ Ամիրջանը։ Ամբողջ դուռ արդէնէ յատկացված է իրրև նպաստ Անդրէվսկիսի սովալուկ հայերի, գլխաւորապէս հայ-թուրքական կռուրդի շրջանի բնակիչներին։

(«Т. Л.»)

«Закавказіе» թերթին գրում են Պետերբուրգից. «Այստեղի սօցիալ-դեմօկրատները նախընտրական շրջանի ժամանակ, որպէս միջոց պատասխանի համար, աշխատեցին ունենալ իրանց լիքալ մամուլը՝ շաբաթաթերթի և ամենօրեայ լրագիրների ձևով։ Այսպէս, այս տարվայ սկզբում այստեղ արդէն լոյս էին տեսնում և խլացն և եթէ էլ փակվում էին հետևեալ լրագիրները. «Тернія Труда», «Простыя Рѣчи», «Зрѣніе»։ Այսպիսով, ներկայումս ստիպված ենք բաւականանալու միայն «Пролетарій» թերթով։

Յունվարի 3-ին, առաւօտեան ժամի 10-ին, երբ Բաք

ցահանդէսը բացվելու է 1907 թուի հոկտեմբեր ամսում։

—

ՏԱՇԿԵՆՏԻՑ, մեզ գրում են։ Առաջադիմական թեկնածու պատուիրակների ցանկը հրատարակված է. գետեղած են երեք հայեր տեղական գաղութից։ Կազալինսկիյ գաւառի 6 պատուիրակների թւում անցել է և Պետրոս Զաքարեանը, որ մեծ զայրոյթ է յարուցանում տեղական «քուն-ռուս» մարդկանց շրջանում։

—

«Рѣчь» լրագիրը հաղորդում է, որ Պրեսյաակի բանտում մի ամիս է, որ բանտարկված է 14 տարեկան պատանի, Գօլտաւայի արհեստաւորաց դպրոցի աշակերտ Գրիգորի Դվորնիկը։ Մինչև այժմ նրան չեն յայտնել թէ ինչ յանցանքի մէջ է մեղադրվում նա։ Այդ դեռահաս քաղաքական յանցաւորի դրութիւնը բաւականին անտանելի է. նա հրաժարվում է դրօսանքներից և ամբողջ ժամանակը լալիս է ու խնդրում իրան ազատել։

«Утро» լրագրին Պետերբուրգից հաղորդում են, որ վերջին օրերս մինիստրների Նախագահ Ստոլիպինը ամենայն օր գնում է Ցարսկոյէ Սելօ։ Նրա այդքան այցելութիւնները մեծ նշանակութիւն են տալիս, որովհետև նրանք նախ և առաջ կապ ունեն ընտրութիւնների ընթացքի և այն օրինագծերի հետ, որոնք առաջարկվելու են Պետական Դումային։ Ցարսկոյէ-Սելօյում էլ եռանդուն կերպով պատրաստութիւններ են տեսնվում։ Մօտ ժամանակներս սպասում են, որ կառավարական հաղորդագրութիւն պիտի հրատարակվի։

—

Ռուսաստանի սովհաների նպաստամատույց հասարակական յանձնաժողովը հրատարակել է իր գործունէութեան վերջին հաշիւը։ Յանձնաժողովը ցաւ է յայտնում, որ, մի ժամանակ նիւթական սպառման հետ, ամենայն օր հասնում են աւելի ու աւելի սրտամրմոջ տեղեկութիւններ սովատանջ նահանգներից, որտեղ կարիքը գնալով սուր կերպարանք է ստանում։ Առհասարակ յանձնաժողովի առած տեղեկութիւնները սարսափեցուցիչ են. ամեն ինչ սպառված է, կերված, վաճառված, հիւանդութիւնները ճարակում են մեծ չափերով. ցրտից և քաղցից մեռնում են գլխաւորապէս երեխաները։ Տեղի են ունեցել սովի պատճառով մի քանի ինքնասպանութեան օրէնակներ և ոստիկանութեան հետ ընդհարվելու արիւնահեղ դէպքեր։ Այն տեղերում, ուր կառավարութեան նպաստների օգնութիւնը դեռ չէ ստացվել կամ ուշ է ստացվել կամ եթէ ստացվել է՝ շատ չնչին չափով, գիւղացիների դրութիւնը անկարագրելի է։ Մասնաւոր բարեգործական օգնութիւնը այնտեղ սկսել է կազմակերպվել վերջին ժամանակներս միայն, որի պատճառը ադմինիստրացիայի կողմից գործադրված բեկբեսպարներն էին։ Մասնաժողովը բոլորովին անզօր է փոքր ի շատէ գործնական օգնութիւն հասցնելու ազգային նիւթական սղութեան պատճառով։ Մասնաժողովը ջիրմպին զէմում է հասարակութեանը օգնութեան շտապել տասեակ հազարաւոր սովհաներին։ («Рѣчь»)

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ

II

Երկրորդ գլխաւոր էկամը, որի վրա կանգ է առնում Բուզվէլտ իր պատգամագրում, Ալջեզիրասի կոնֆերենցիան է։ Նախագահը զոհունակութիւն է յայտնում կոնֆերենցիայի աջող ելքի մասին և ասում, որ Միացեալ-Նահանգների մնուխական շահերը ևս ապահովված են Մարոկում, նոյն և հաւասար չափով, որքան ուրիշ պետութիւնների շահերը։

Երրորդ էական կէտը վերաբերում է այն կոնֆերենցիային, որ պէտք է գումարվի Հաագում։ Նախագահը ուրախութիւն յայտնելով, որ ամերիկեան բոլոր պետութիւնները հրաւիրված են խաղաղութեան համաժողովին, աւելացնում է. «Պատերազմը ոչ միայն արդարանալի է, այլ և պարտաւորական ամէն պատուազան ժողովրդի, ազգի համար, երբ խաղաղութիւնը պէտք է ձեռք բերվի միայն համաձայնութիւնների կամ ազգային զոհաբերութեան գնով։ Խաղաղութիւնը ինքն ըստ ինքեան մի մեծ բարիք է և պէտք է համապատասխանէ պարկեշտութեան զգացմունքին։ Բայց պարկեշտութեան զգացմունքն է, որ պէտք է կապէ մի ազգի, ինչպէս և անհատի, խիղճը և ոչ թէ խաղաղութիւնը։ Եւ մի ազգ կամ մի անհատ չէ կարող ենթարկել իր խիղճը մի ուրիշ ազգի կամ անհատի քմահաճոյքին։ Արդար պատերազմը շատ աւելի օգտակար է մի ազգի համար, քան խաղաղութիւնը, որ ձեռք է բերվում ամեն անիրաւութեան կամ անարդարութեան առաջ գլուխ խոնարհեցնելով։ Պատերազմի մէջ յաղթելը երբեմն աւելի լաւ է, քան բնաւ չը պատերազմելը։ Իրաւացի է այն խօսքը, թէ մի յաղթված ազգ անպատճառ անպատուած կը լինի միայն այն ժամանակ, երբ չի կատարի իր իրաւունքը պաշտպանելու պարտականութիւնը։»

Այս ռազմասէր խօսքերից յետոյ Բուզվէլտը բացատրում է. «Պէտք է ամեն ջանք գործադրել՝ փութացնելու համար այն վայրկեանը, երբ խաղաղութիւնը կը տիրէ ազգերի միջև։ Բայց ներկայ պայմաններում, մի ազատ և մեծ ազգ՝ յիմար և վատ վարմունք ունեցած պիտի լինի. եթէ չը պաշտպանէ իր իրաւունքները, և բացառիկ հանգամանքներում չը պաշտպան է և՝ ուրիշներին։ Վէճերը խաղաղութեամբ կարելի է լուծել միայն այն ժամանակ, երբ ազգերը կունենան իրանց լաւ դիտաւորութիւնները իրագործելու համար բաւականաչափ զինված ոյժ։ Միացեալ-Նահանգների նաւատորմը, խաղաղութեան լաւագոյն երաշխիքն է Ամերիկայի համար։»

Նախագահ Բուզվէլտը՝ մարտնչող փիլիսոփաներից է, և իբրև այդպիսին՝ զուարձալի հակասութիւններով լիքը։ Այդ պետական մարդը, որ հուչակում է ազգերի, ժողովուրդների իրաւունքը, նոյն իսկ պարտականութիւնը՝ պատերազմ մղելու իրանց ազգային արժանապատուութեան, իրաւունքների համար, թէ՝ էր մտածում, երբ վերկացան Ֆիլիպպինեները ամերիկացիների դէմ, մինչոյն պատճառներից դրդված։ Արդիւք այդ դէպքում Ֆիլիպպինները ապստամբներ, աւազակներ, վայրենիներ չէին։ Եւ նոյն Բուզվէլտը յարգից, խոնարհվից նրանց անկախութեան իրաւունքը, ազգային արժանապատուութիւնը։ Նախագահ Բուզվէլտ հուչակում է նոյնպէս պետութիւնների պարտականութիւնը՝ պաշտպանել ուրիշներին։ Բայց այդ նոյն Բուզվէլտը չէ՞ր, որ, երբ հայերը ճմրված, ճզմված մի արիւնախում բռնակալութեան թաթի տակ, դիմեցին նրան օգնութեան հասնելու, պատասխանեց. Ամերիկան չէ կարող մի ուրիշ պետութեան «հերքին գործերին» խառնվել. և եթէ նոյնիսկ խառնվի, դա աւելի վատագոյն հետեւանքներ կունենայ հայերի համար։ Էլ ինչու են այս պատատախօսութիւններն ու ծակ փիլիսոփայութիւնները։ Բուզվէլտը ասում է և հետեւելը. «Վէճերը կարելի է խաղաղութեամբ լուծել միայն այն ժամանակ, երբ ազգերը կունենան իրանց լաւ դիտաւորութիւնները իրագործելու համար բաւականաչափ զինված ոյժ»։ Սա աւելի քան տարօրինակ ձևակերպութիւն է խաղաղութեան իդէալի. որ «բաւականաչափ զինված» ազգի համար «լաւ դիտաւորութիւն» չէ մեծանալ, խոշորանալ, չդառնալ ուրիշի հուչին։ Մի թէ «բաւականաչափ զինված» Բիսմարկի Գերմանիան «լաւ դիտաւորութիւն» չէր համարում ջախջախել Ֆրանսիան. մի թէ «բաւականաչափ զինված» Անգլիան «լաւ դիտաւորութիւն» չէր համարում խեղդի բերել փոքրիկ, նահապետական Տրանսվաալին։ Եւ մի թէ «բաւականաչափ զինված» Ամերիկան, որի «խաղաղութեան լաւագոյն երաշխիքն է» իր նաւատորմը, այսինքն թնդանօթները, մասնաւոր գործիքները, «լաւ դիտաւորութիւն» չը պիտի համարէ ընկճել նոր Ֆիլիպպինների, կուբացիների, և բոլոր նը բանց, որոնք տկար են։

Ո՛չ ասպետ Բուզվէլտը իր փայլուն բառերի տակ փառաբանում է հին, ծանօթ, ամբարիշտ երգը. «Իրաւունքը զօրաւունին է»։ Հէգօրացիր, որպէս զի տիրես...

Այնուհետև նախագահը ծանրացաւ Մընրօէի վարդապետութեան վրա, որի համաձայն ոչ մի օտար պետութիւն իրաւունք չունի միջամտելու Ամերիկայի, հիւսիսային թէ հարաւային Ամերիկայի գործերում։ Այո, բայց դա չէ արգելում, որ Ամերիկան խառնվի Ամերիկայի սահմաններից դուրս գտնվող պետութիւնների և ազգերի գործերին...

Բուզվէլտը շոշափեց և մի քանի այլ խնդիրներ, ներքին քաղաքականութեան վերաբերեալ, ինչպէս ամուսնութեան և ապահարզանի, փոստային դրութեան, Լինչի օրէնքի և այլ հարցերի մասին, որոնց կանդրադառնանք մի այլ անգամ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Բեբելի կարծիքը ընտրութիւնների հետեւանքների մասին.—Վիեննայի «Zeit» թերթի թղթակիցը խօսակցութիւն է ունեցել գերմանական օսցիալ-դեմոկրատիայի ղեկավարի հետ ընտրութիւնների և օսցիալիստների պարտութեան մասին։ Պատասխանելով այն հարցին, թէ պարտութեան պատճառները որոնք են, Բեբելն ասել է, որ առաջին տեղը բռնում է ազգային հարցը։ Ժողովրդային խաւար մասան անկիրթութեամբ մոռածում էր, որ նա կանչված է հարձակիչը փրկելու Մանր արհեստաւորներն էլ զրպված էին մնտեսական կուսից։ Մինչև իսկ մանր-արդիւնագործները, որոնք առաջ օսցիալ-դեմոկրատ էին, հիմա մեր դէմ են գնում։ Դասակարգային հակասութիւնները սրվում են. գիւղում մեզ խանգարեց մսի թանգութեան դէմ մղած կռիւը։ Գիւղացին, որը հէնց մի զոյգ խոզեր է ծախում, նա էլ ուզում է կարելի եղածին չափ թանգ ծախել։ Բացի դրանից բիւրոկրատական ճնշումը ներկայումս բաւական ուժեղ էր։

Բեբելը չի ծածկում, որ դրութիւնը ծանր է։—«Մեզ համար նեռանաւանդ զգալի է, ասում էր նա, հին շրջանների կորուստը, ինչպէս օրինակ Դոտա, Բրեսլաու, Բրաունշվէյգ, որոնք մեզ էին պատկանում դեռ սոցիալիստներին դէմ հրատարակված բացառիկ օրէնքների ժամանակ»։ Նա մեծ յոյսը չէր տածում և կրկնաբէաբկութիւններին, գտնելով, որ սոցիալ-դեմոկրատների համար այդ կրկնաքաէարկութիւնները շատ էլ նպաստաւոր պայմաններում չեն կատարվում։ Իսկ ինչ վերաբերում է ազատամտութեան զարգանալուն, Բեբելը նայում է դրա վրա, որպէս մի շուտափոյթ անցնողական երեւոյթ։ Ի հարկէ, օսցիալիստները ոչինչ չունին իսկական դեմոկրատ ազատամտութեան դէմ, բայց ազատամիտ կուսակցութիւնը լաւ դեկավար չունի։ Այդ դեռը ունենալուն կարող էր հաւանել միայն Նաումանը։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

3 փետրվարի

ՈՒԹԱ, 2 փետրվարի։ Ուֆայի նահանգի անբերրութիւնից ալասած նահանգներում կատարած շրջագայութիւնից յետոյ վերադարձած փոխ-նահանգապետը հաստատում է, որ կարիքի չափը պայմանաւորեալ է ոչ միայն անբերրութեան աստիճանից, այլ և ազգաբնակութեան պէս-պէս ժողովուրդների բնաւորութեամբ։ Սով ոչ մի տեղ չը կայ. միայն բացառապէս թուրքերի մօտ ուտեստեղէնի մեծ կարիք կայ։ Լաւ հացի պահեստներ գտնվում են ամեն տեղ։ Նահանգական վարչութեան գործունէութիւնը ամենուրեք կանոնաւոր է։ Օգնութեան գործի կազմակերպութեան մի քանի աննշան պակասութիւններն էլ վերացվում են կարուկ միջոցներով։ Պաշտօնապէս յայտարարված է որ գիւղերում ոչ մի վարակիչ հիւանդութիւն արդէն չը կայ։ Այդօրինակ գիւղերի թիւը սովորական նորմայից չէ անցնում։

ԼՕՆԴՕՆ, 2 փետրվարի։ Մարտէնսը երկար զրուցեց թագաւորի հետ և հետս բարովի ժամանակ տեսնվեց արտաքին գործերի մինիստրի հետ, որին պարզեց իր միսսիայի գլխաւոր հարցերը և եկաւ ամենալաւ հուսանաքների։ Մարտէնսը գեղեցիկ տպաւորութիւն ստացաւ Լօնդոնի ընդունելութիւնից վաղը նա մեկնում է Հաագա։

ՎԻԵՆՆԱ, 3 փետրվարի։ Ռէյխսրաղի ընտրութիւնների ժամանակամիջոցը կորոշվի փետրվարի 6-ին։ Կարծիք կայ, որ ընտրութիւնները կը կայանան մայիսի 1-ին, իսկ վերաքաւերութիւնը մայիսի 10-ին։

4 փետրվարի

ՎԱՇԻՆԳՏՕՆ, 3 փետրվարի։ Միացեալ-Նահանգների կառավարութեան և Կալիֆորնիայի պատգամաւորների համաձայնութիւն կայացաւ, որի համաձայն Կալիֆորնիան փակելու է տեղին ազգաբնակութեան դպրոցները։ Եապօնացիների երեխաները անպայման կընդունեն սպիտակների դպրոցները։ Դաղազգային արժանապատուութիւնը։ Նախագահ Թանակութեան փոխված բիլը ընդունվեց Բուզվէլտից։ Սառատ-սէկրէտար Բուդը յայտնել է, որ եթէ բիլը ներկայ նստաշրջանում չընդունվեց, այն ժամանակ արտակարգ նստաշրջան կը գումարվի։

ԹԷՀՐԱՆԻՍ, 3 փետրվարի։ Անգլին ձգտում է եկեղ։ Նահանգիսը ծածկվեց սառոյցով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 փետրվարի։ Բարձրագոյն հատատատութիւն է գտել մինիստրների խորհրդի այն որոշումը, որի համաձայն առանձի մինիստրին իրաւունք է տրվում ուսական կայսրութիւնը բաժանել նոր լեռնային վիճակների չը փոխելով հանդերձ նրանց արդէն գոյութիւն ունեցող թիւը և չը խախտելով լեռնային շրջանների եղած սահմանները, և փոխել նահանգական ինժենէրների թւական կազմը։

ՎԻԵՆՆԱ, 3 փետրվարի։ Առաւտեան վախճանվեց պրինցուհի Կէմենտինա Կօբուրգսկայան։

ՎՕՐՕՆԵԺ, 3 փետրվարի։ 1905 թ. նոյեմբեր ամսին, ուղղիչ գումարակում տեսի ունեցած ապատամբութեան ժամանակ անզգուշութեան համար փոխ-դղդապետ Կրասնոպէլսկին պատերազմ-դաշտային դատարանից դատապարտվեց 8 ամսեայ բանտարկութեան։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 փետրվարի։ Մենատը բացատրել է, որ ռուսահպատակ օտարազգիները իրաւունք չունեն ժառանգութեան կարգով, օրէնքով կամ թէ կտակով Սև-ծովեան նահանգում ձեռք բերել այն հողերը, որոնք մնում են ռուսների մահից յետոյ։

ՊԱՐԻԶ 3 փետրվարի։ Պալատի միջանցքներում յամառ լուրեր են պտտվում, թէ եկեղեցին վարձով տալու հարցի նկատմամբ կարինետի մէջ լուրջ տարաձայնութիւններ են ծագել։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 փետրվարի։ Պետերբուրգի կոնսերվատորիայի եկեղեցում հոգեհանգիստ կատարվեց երաժշտագէտ Գլինկայի յիշատակին։ Ներկայ էին երաժշտական աշխարհը, արտիստները, արտիստուհիները։ Մօսկվայից հաղորդում են, որ կոնսերվատորիայում նոյնպէս հոգեհանգիստ է կատարվել։ Բաղաքը ի յիշատակ հանճարեղ երաժշտագէտի ներկայացուցիչներ է կազմակերպում ժողովրդական տների մէջ։ Կայսերական մեծ թատրոնը փետրվարի 5-ին տալու է «Բուսլան և Լիւդմիլան»։

ՀԱԱԳԱ, 3 փետրվարի։ Ամսիս 4-ին քաղաքս կը հասնի, իսկ 5-ին կայսրուհուց կընդունվի պրոֆէսոր Մարտէնսը։

4 փետրվարի

ԿՐԱՍՆՕԵԱՐՍԿ, 3 փետրվարի։ 1905 թ. զինուորների զինված ապատամբութեան գործի առիթով 9 հոգի դատապարտվեցին աքսորի 4—8 տարի ժամանակով, 101 հոգի—բանտարկութեան 1—3 տարով, 4 հոգի—ուղղիչ բանտի 3 օրով։ Զինուորներից 41-ը դատապարտվել են մէկ կէս տարով բանտարկութեան ուղղիչ բանտում, իսկ 37-ը՝ ըերդում։

ԲԵՐԼԻՆ, 3 փետրվարի։ Բարձր տեխնիքական դպրոցի գերմանացի ուսանողների բազմամարդ ժողովում միաձայն վճռված է զայրոյթ յայտնել այն առիթով, որ ռուս ուսանողները գերմանական ընտրութիւնների ժամանակ մասնակցել են օսցիալ-դեմոկրատական ագիտացիային։ Բանաձևի մէջ ասված է, որ նկատվել է, որ ռուս ուսանողները ագիտացիա են մղել։ Ուսանողութիւնը մտադիր է աշխատել ամեն կերպ, որ դպրոցի խորհուրդը խիստ կերպով պատժէ մեղաւորներին։

ԲԵԼԳՐԱԴ 3 փետրվարի։ Նախկին դաւաճանների և նրանց հակառակորդների միջև գոյութիւն ունեցող անհամաձայնութիւնը պատճառով, նախկին դաւաճանի օթիցէրներից 4 հոգի փոխոցում յարձակվեցին սկուպչինայի անդամ Նիպոլէդոնակ Մարինկովիչի վրա և ծանր վիրաւորեցին նրան մահակներով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 փետրվարի։ Եկատերինոսլաւի նահանգի Ալէքսանդրովսկի, Նովօմոսկովսկի գաւառները, բացի Ամուր և Նիժնէ-Դնէպրովսկ արուարձաններից, ինչպէս և Ելիսավէտգրադ և Ալէքսանդրիա քաղաքներից և Խերսոնի նահանգի գաւառներից, յայտարարված են սաստկացած քաղաքական դրութեան մէջ, զինուորական փոխարէն։

ՊԱՐԻԶ, 4 փետրվարի։ Չը նայած պաշտօնական տեղեկութիւնների լաւատեսութեան, պարլամենտական շրջաններում կարինէտի դրութիւնը վերին ատիճանի խախտուած է համարվում։ Պնդում են, որ նրա անդամների մէջ խոշոր տարաձայնութիւններ են ծագել կրօնական քաղաքականութեան հարցի առիթով։ Այդ տարաձայնութիւնները մօտիկ ապագայում կարող են լիակատար կամ մասնակի մինիստրական ճգնաժամ առաջ բերել։

(Սեփական թղթակից)

ՍՕՖԻԱ, 5 փետրվարի։ Լրագիրները համակրական նեկրոլոգներ են տպում պրինցուհի Կլեմենտինի մասվան առիթով։ Օպոզիցիան յանդգնեց ամբողջ երկրում բողոքի միտինգները, որ նշանակված էին փետրվարի 4-ին։

ՆՕՎԻ-ՄԱՐԳԵԼԱՆ, 4 փետրվարի։ Անյայտ մի անձնաւորութիւն կրակեց Ֆերգանսկի շրջանի զինուորական նահանգապետ Պոկատիլոյի վրա, եկեղեցուց վերադառնալու ճանապարհին, սակայն գնդակը վրիպեց և վիրաւորեց ուղեկցող զինուորի ոտքը։ Ցանցաւորը աշխատեց փախչել, բայց վիրաւորվեց զինուորի արձակած գնդակից, ընկաւ և ձերբակալվեց։

5 փետրվարի

ՄԱԴՐԻԴ, 4 փետրվարի։ Ռուսաց դեսպանը յայտնեց արտաքին գործերի մինիստրին, որ պրօֆէսոր Մարտէնսը ճանապարհի երկար տարածութեան պատճառով անկարող է այցելել Սպանիա, բայց և այնպէս կառավարութիւնը ցանկանում է իմանալ, թէ Սպանիան ինչ հայեցակէտ ունի Հաագայի կոնֆերենցիայի վերաբերմամբ։ Ուստի դեսպանը խնդրում է յանձնարարել Սպանիայի՝ Հռոմում, Հաագայում կամ Վիեննայում նստող ներկայացուցչին — պարզել Մարտէնսին Սպանիայի հայեցակէտը։ Արտաքին գործերի մինիստրը շնորհակալութիւն յայտնեց ռուս դեսպանին Ռուսաստանի սըրտագին վերաբերմունքի համար և յանձնարարեց Հռոմում ապրող դեսպանին (նախկին դեսպան Պետերբուրգում), պարզել Մարտէնսին Սպանիայի կարծիքը։

ՆԻԻ-ԵՕՐԿ, 4 փետրվարի։ Հարլէմ արուարձանը գնացող երկաթգծի վագոնը, որի մէջ նստած էին շատ մարդիկ, դուրս թռաւ գծից և մեծ դժբաղդութեան պատճառ դարձաւ. սպանվեցին 20, վիրաւորվեցին 50 հոգի։ Երկաթգծի վագոնները խրվեցին հողում և այրվեցին։

ԼՕՆԴՕՆ, 4 փետրվարի։ Աշխատաւոր խմբակի փէջը Կէր-Հարդիէ՝ եկաւ կէմբրիջ՝ քաղաքային ինքնավարութեան գահլիճում միտինգ կազմելու—պալատում գտնական ճասի վերաբերութեամբ եղած վիճաբանութիւնների առիթով։ Միտինգից առաջ գահլիճի պատուհանից նետվեց մի թիթեղեայ ծան ծծմբաթթուատով, որ տարածեց խեղդող հոտ։ Ապա մի քանի հարիւր ուսանող ներս խուժեցին գահլիճ։ Երբ Կէր-Հարդին երեւաց ամբիոնում, ուսանողները սկսեցին նրա վրա նարինջներ, շաքարի կտորներ նետել։ Համալարանի վարչութիւնը խնդրեց ուսանողներին չարգելել Կէր-Դարդիին խօսելու։ Ուսանողները սկսեցին երգել «Տէր, պահեա զթագաւորն մեր» օրհներգը, իսկ միւսները պէս-պէս հայրենասիրական երգեր։ Միտինգը աղմկ չունեցաւ։ Ուսանողներին դուրս տարան։

ՎԱՇԻՆԳՏՕՆ, 4 փետրվարի։ Սենատը, եւրէկ ընդունեց գաղթականութեան նոր օրէնագիծը։ Համաձայն նոր օրէնքի, նախագահը իրաւունք ունի չը թոյլատրել, որ օտարազգի պետութիւնների հպատակները մտնեն Միացեալ-Նահանգները, եթէ նրանց անցագրերում նշանակված է, որ նրանք մտնելու են այս կամ այն պետութիւնը, սակայն ոչ Ամերիկա։ Նախագահը կարող է նաև չը թոյլատրել մտնել այն օտարպատահակներին, որոնք, նրա կարծիքով, կարող են վնասել Ամերիկայի բանաւորներին։

ՆՈՐ-ՄԱՐԳԵԼԱՆ, 4 փետրվարի։ Նահանգապետի կենցաղի դէմ մահափորձ կատարված տեղում, զօրքերի և ազգաբնակութեան ներկայութեամբ կատարվեց զոհաբանական մաղթանք, որից ետոյ նահանգապետը առողջութիւն մաղթեց Թագաւոր Կայսրին և ասաց. «Մենք բոլորս ուրախ ենք ծառայել Նրան հաւատարմութեամբ և արդարութեամբ մինչև վերջին շունչը, չը վախենալով մահից»։ Շնորհակալութիւն յայտնեց համակրանքի համար։

ԿԱԶԱՆ, 4 փետրվարի։ Ուսանողները ձայների ահագին մեծամասնութեամբ որոշեցին պատգամաւորները չարձակել։

ԿԱԼՈՒԳԱ, 5 փետրվարի, (Պաշտօնական թղթակից)։ Կոզելսկի գաւառում, Վոլոսովո—Բուզինսկի շրջանային վարչութեան մէջ, մի քանի գիւղերի բնակիչները արգելեցին զեմստվոյական իշխանութեան քնել դատաստանական գործերը, պահանջեցին փոխել շրջանային ատամուտերին նրա համար, որ նա նրանց չէ տալիս մասակարարական փոխառութիւն։ Փետրվարի 4-ին նշանակեցին ինքնակամ ժողով և վճռեցին այժմ ստիպել փոխելու ատամուտերին։ Ուղարկված են փոխ-նահանգապետը, դատախազի օգնականը և մի վաշտ զօրք։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 փետրվարի։ Հողային բանկարդութեան գլխաւոր կառավարիչը մինիստրների խորհրդին է ներկայացնում մի առաջարկ՝ 1897 թ. մայիսի 12-ի օրէնքը, որ վերաբերում է շինական տարբական գրաբոցներին հողաբաժիններ յատկացնելուն և սրանց ձրիաբար փայտ բաց թողնելուն, տարածել Շուրջբալտեան, Պրեվիսլանսկի և Կովկասի նահանգների և Սաէպի և Թուրքեստանի շրջանի և գենեալ-նահանգապետութեան վրա։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Գուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱԹԱՒՈՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերաբուժութեան, վիներական (սիֆիլիս) մերասա. հ.։
Կ. Մ. ԶԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ականջի և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱԻՍՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մարթու, վիներակ. և վերաբուժութիւն։
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծանկահան.։
Կ. Ի. ԴԷԼԻԵՎ—1—2 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԱՖԵՆ Ա. Ի. ՇԱՏԵՐԵՐԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։
Գ. Ե. Գուրվիչով—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութեան։
ԵՐԵԿՈՆՆԵՐԸ
Կ. Ի. ԴԷԼԻԵՎ—6½—7½ ժ.։
Վճարը 50 կ.։ Հրաւերները ձրի։ Համախորհրդի (կոն սիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

ԺՈՂՈՎԱՐԱՆԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ

Երեքշաբթի, փետրվարի 6 ին
Հայ դրամատիկ ընկերութեան խումբը
Անդամների, փոխանդամների և նրանց ընտանիքների համար
ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ
Վանի շինի զաւակներ
Դրամա 4 արար. Նայդեհովի թարգ. Ռ. Աբելեանի
Մասնակցում են՝ տ. տ. Արաքս, Աւետեան, Մայսուրեան, Մելիքեան, Ցասմիկ, Նոնիկեան, Վարդուհի, Օհանեան, օր. Բէժանեան, պ. պ. Աբելեան, Աւետեան, Զարիֆեան, Մանուելեան և Ցարութիւնեան։
Յատկապէս այս պիեսայի համար շինված է նոր դեկօրասիոն
Սկիզբը երեկոյեան ժամը ճիշտ 8-ին է։
Տեղերի գները 1 ռուբլուց մինչև 30 կօպէկ։
Հիւրերը անդամների երաշխաւորութեամբ վճարում են ամեն մի տոմսակին 1 ռուբլի ևս։
Աշակերտներին չէ թոյլատրվում։
Եժիսեօր Ց. Աբելեան
1—1

XXV ԱՂԲԻՒՐ | 1907 | ԳԵՂԱՓՆՋԻԿ I

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ՅՈՒՆՈՒԱՐ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բոլոր մանուկներին շնորհաւորնոր տարի—պատկեր։
Հին և Նոր տարի (ոտանաւոր) Կ. Կ. Մելիք-Շահնազարեանց։
Հարիւններ (պատկերազարդ) Հէքիաթ) Լ. Մելիք-Ադամանց։
Հուրի-Մարգ (հէքիաթ ոտանաւոր) Ա. Տ. Խ.
Հաւերն ու աքաղաղները—պատկեր։
Ծաղիկներ մէջ (Նոր ծանօթներ) Կ. Կ. Մ. Շահ.
Նոր տարւայ երգեր—պատկեր։
Թունի (պատմուած)—Lucy Audretsch.
Պանդուխտի տեսիլ (բանաստեղծ.)—Տ. Հիւսեանց։
Ծրտի լեզուն—Ղ. Աղայեան։
Բագու (ոտանաւոր)—Ն. Տ. Ա.
Բագու (ծովեզը)—պատկեր։
Երշանիկ Չուլհակ (աւանդութիւն)—Սէյրի։
Պտիկ ու Լիտիկ (առակ)—Ցարտ. Թումանեան
Զուարճալիք
Հանելուկ, առաջարկ, խնդիր—(Մոնու, Ան. տիկ. Մօրէ, Զարուհի)։

Պատկերներ և նկարներ
1. Բաղդի լուծքը, նկար Ալֆ. Շաարցի։
2. ԱՐՈՂԱ Fantaisie իրականութիւնից
3. գործող. Շուշում տեսարաններից
4. կիրչ)։
5.
Սովամահ գաւառներ
6. Շուշի քաղաքը (Արցախ)։
7. Գօրիս (Սիւնիք)։
8. Զանգեզուրի լեռներն ու պրնձահանքերը։
Ժամանակակից մատենագիրներ
9. Նար-Դոս։
10. Աստուածային Մանուկն ու Աստուածամայր։
11. Ռոբերտ Շուման (մանուկ յիշատակ)։
Թարմ շիրիմներ
12. Նահապետ եպիսկոպոս Նահապետեան։
13. Արիստակէս արքեպիսկ. Սեդրակեան։
14. Մկրտիչ Պալեան։
15. Գէորգ Պետրոսեան։
16. Պեսար Օազէրեան։
17. Գ. Պետրոսեան (գրքոյկ. դերի մէջ)։
18. Մուղանֆէր-Էդդին շահ։
19. Սեմոյ հինաւուրց վանքը։
Զաւեշտ
20. Բաղաքական կօնդերտ—Տրիօ։

Հրատարակում է ընթերցողը իր հացէի հետ ուղարկել 50 կ. ТИФЛИСЪ, Редакція АГБЮРЪ և ստանալ արդէն լոյս տեսած այս երկու փառահեղ և բազմարովանդակ հանդէսների Ադրիւռի և Գեղափնջիկ յունուարի №№-ը։ Պատկերները թարմ, շքեղ և ժամանակակից։ Տարեկան ծօրուածները հետաքրքրաշարժ։

—

Շարունակում է բաժանորդագրութիւնը Ադրիւռ, Գեղափնջիկ, Ցօբելեանական Ալբօմ-Աւանգախօսլ տարին 5 ր. (Արտասահման 10 ր.)։

ՆԻՒԹ

1. Աղայեան Դ.
2. Բարխուդարեան Գ.
3. Բաշինջարեան Գ.
4. Մարկոսեան Լ.
5. Ցարութիւնեան Ի.
6. Նար-Դոս։
7. Նազարեան Տ.
8. Զմշկեան Գ.
9. Պետրոսեան Ց.
10. Սիլան
11. Վանցեան Գ.
12. Tigo
13. Բաղամէս

1—1

ՇՏԱՊԵՑԷՔ ՕԳՆԵԼ

Թիֆլիսի Կենտրօնական Նպաստամատոյց Յանձնաժողովը յայտարարում է, որ կրկին ստացված է

„ԳԵՂՈՒՆԻ“

Զուտ արդիւնքը յատկացրված է յօգուտ հայ տառապեալների։ Ցանկացողները ստանալ այդ պատկերազարդ և շքեղ հատորը, որ գահլիճի ամենալաւ զարդն է և գեղարուեստական մեծ հաճոյք է պատճառում, թող շտապեն ուղարկել 4 ր. և ճանապարհածախքի համար 40 կ., ընդամենը 4 ր. 40 կօպ., «Մշակի» խմբագրատունը, «Գուտենբերգ» գրավաճառանոցը և կամ «Ժամանակի» լրագրի խմբագրատունը։

8—10

ՃԵՄԱՐԱՆԻ

Ա. և Բ. լարանների մի խումբ
ՈՒՍԱՆՈՂՆԵՐ
ՊԵՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ
միջնակարգ և ծխական դպրոցների բոլոր դասարանների համար աշակերտներ։
Վերցնում են և մասնաւոր դասեր տեղում։ Որոնում են նաև ՅԱՐՄԱՐ ՊԱՇՏՕՆ։
Դիմել՝ «Մշակի» խմբագրութեան։
1—5

Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւնը

1907 թ. ապրիլի 26-ին լրացնելով իւր գոյութեան քսան եւ հինգամեակը, խնդրում է իր դպրոցաւարտ սանուհիներին ուղարկել հետեւեալ տեղեկութիւնները։
1) Ի՞նչով է պարապել սանուհին ընկերութեան կ